Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

206.2
U-78

980
981

206.2
U-78
1962

1063

509.

208.21
Գ-67

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

ՀԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ Մ. ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

1863

ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԳԱՐԻԼԻ ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՑ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

Գ160-38

“Յայնժամ սե՛ւ ուշ ամաչէի 'ի զգուշանալ 'ի պատուիրանս քո,, **Սաղմ. ՃԺԸ։**

“Այսուհետև որ համարիցի հաստատուն կալ, զգո՛ւշ լիցի, գուցէ անկանիցի,,։ **Ա. Կորն. Գ. 12։**

1085584-42

Напечатано съ разрѣшенія Верховнаго Патріарха и Католикоса всѣхъ Армянъ Маттеоса.

Февраля 5 дня 1863 г. Тифлисъ.

17100-58

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Փորձով ստուգեալ է այս առած բարոյական. "Եթէ 'ի վարքունց ոչ զգուշացիս, 'ի մեծամեծաց վրատանգեսցիս,,: Առ այս տաց օրինակ տուրքն Յովհան Ոսկեբերան յասելն. "Մեղուք անկարաման չինել մեղր 'ի փեթակի անդ, ուր սարդք ոստայն արկանեն,,: 'Ի սոյն միտս 'ի զգուշութիւն խրատ ասանդէ Շնորհալի Սուրբ վարդապետն մեր Սարգիս. "Զէ ինչ օգուտ յամենայն կողմանց ցանգալ ամրացուցանել զայդի, և 'ի միում անկեանն խրամատել, զի այն վարքն բուսական է մուտ գործել գազանացն առ 'ի զպտուղ այգւոյն ապականել,,. 'Ի Մեկն. Յակ. Ճառ Ա: Եթէ այսպէս լատ մարմնաւորին, ապա ուրեմն որչափ մեծի զգուշութեան պէտք են, զի մի երբէք մուտ գտցէ 'ի խորհուրդս մտաց մերոց բան ինչ հակառակ աւետարանական ճշմարտութեան, Քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան և առաքելական աւանդութեանց: Ոչ է արժան պարծիլ յուսմունս մեր բնական և բարոյական գիտութեանց, այլ պարտ է զգուշանալ յամենայնի, գիտելով զի բանք ինչ մտախաբք արտադրեալք հակառակ սուրբ գրոց, մեծ այլայլութիւն տան միտաց: Վասն որոյ գրէ Երանելի առաքեալն Պօղոս. "Ոչ բարուք են պարծանքդ ձեր. ոչ գիտէք, եթէ փոքր

մի խմոր զամենայն զանգուածն խմորէ,,։ Ա. Կորն. Ե. 6։ Գաղ. Ե. 9։

Զայս նկատելով մեր փոյթ յանձին կալաք զայն յայտնել գրով առ ողջամիտ Ազգն իմ սիրելի, որ գիտակացուն մեզ։ Գանգի այն ինչ Աստուածային կամքն ժամանեալ 'ի միտնեալ մայր տուրբ Աթոռս առ 'ի ապաստարել առաքելական և Լուսաւորչական մեծաշուք գահիս՝ մերով անարժան և տկար անձամբ, փութացաք վերահասու լինել ձեռագիր և տպեալ մատենից՝ որք 'ի գրատան մայր Աթոռոյս. անդ տեսաք մեք զԱստուծոյն պատկերազարդ և փառակազմ, որ ունէր 'ի ճակատս իւր գրեալ զարք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ Պատմութիւն վարուց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Տպեալ 'ի Փարիզ 'ի Մուրատեան Վարժարանի. 1854։

Զինքն ընթեռնլոյ մեր զայնպէսի նորամուտ և զանգուտչուճ վերատեսութիւն պաշտելի Սրբոյ աստուածորդոյն Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ, ակամբ մատեան լինի զծանօթութեանցն, զորս մեծաւ վրատհութեամբ տալեալ էր Հեղինակն 'ի ներքոյ յայտնի լուսաւոր բանից աստուածորդոյն Յիսուսի, և զբոտաք 'ի նոսա ոչ սակաւ բանս շինութիւն մտաց և այլոյլիս աստուածաբանական բացայայտ խորհրդոց, զորս սեպհական արտաքուստ թիւն համարեցաք մեզ յայտնել և ծանուցանել մեծահաւատ և ողջամիտ սիրելի Ազգիս, 'ի զգուշութիւն նոցա ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, որոյ բարեմասնութեանց ցանկալով, միտամ ապօթարար 'ի բոլոր սրտէ

Մաթեոս Կարողիկոս ամենայն Հայոց։

ԲԱՆ ԱՌԱՋԻՆ·

Զնորալուրն զայն վերատառութիւն վարք Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի առ սրբոյ Աւետարանին ոչ ոք համարձակեցաւ 'ի սրբազան առաքելոց, յառաքելապատիւ հարց սրբոց և 'ի հոգեւոր վարդապետաց տուրբ եկեղեցւոյն Քրիստոսի՝ ըստ հաւատոյ պատմութեանց եկեղեցական և ազգային մատենից։

Բայց 'ի ժամանակս հալածանացն Ատուածպաշտութեան 'ի գաղղիա՝ միայն Ռուսաց մեծրամիտ բանասաեղծ ոմն ժպրհեցաւ զտուրբ աւետարանն անուանել վարք Յիսուսի։ Զայս ոյր գաղղիացի ծանօթացուցանէ մեզ աշխարհաբար համառօտ պատմութիւն հին ազգաց, 'ի հինգերորդ հատորի 'ի թղթահամարն 7· 8· 11։ «Յովհաննէս Յակոբոս Ռուսաց Վոլթերին հաւատար պէտք է դնել 8 — 8· (ժամանք Ռուսաց 1778)· որ պերճաբան և վառվռուն ոճովը, և կարդէ զուրս մատծմունքներովը իր դարուն ամենէն ճարտասան ու նշանաւոր մարդն եղև, բոլոր իրա գրուածոցը մէջ ինքը զինքը հակառակ կցուցնէ քաղաքականութեան, ու իր ժամանակի մարդկային ընկերութեան։ Այս Ռուսաոն ար դարև միայն աւետարան բառին փոխանակ գրաւ վարք Յիսուսի՝ Արդ՝ վերատառութիւնս վարք՝ պատմութեանց վարուց մարդկան յարմարի· քանզի ըստ տուրբ գրոց՝ «Ո՞չ ապաքէն իբրև զփորձութիւն են վարք մարդոյ 'ի վերայ երկրի» ։· Յովբ· Է· 1· և թէ՝ «Զվարս ձեր 'ի մէջ հեթանոսաց

պարկեշտս ցուցանել։» Ա. Պետ. Բ. 12։ Այնպէս վկայութեամբ սրբոյ անուանին վարք սրբոց։

Այս ուրեմն՝ որ ոչ յոնդգնի զայլ նորատակդ անուն տալ սրբազան Աւետարանին Յիսուսի Քրիստոսի, նա ո՛չ միայն մարդասէրական հոգեշունչ բանից հակառակի, այլ և Յիսուսի Քրիստոսի վրիպագործ և սրանչելահրաշ տնօրէնութեան, շնորհն Նմանց այլայլել, և կամ ընդունայնացուցանել. վրիպագործ տնօրէնութեան շնորհն ասեմ, որ միշտ 'ի սրբոց մարգարէից, յերջանիկ առաքելոց, և 'ի սրբազան Հարց դպրոցաց Աւետարան միայն վերաձայնի, ազդմամբ սրբոյ Հոգւոյն Աստուծոյ։ Լուր, զի՞նչ ասայ մարգարէանալ Եսայեայ առաքն Հոգին Աստուած յաղագս վրիպագործ տնօրէնութեան փրկչին մերոյ. «Որպէս զի զեղեցիկք են 'ի վերայ լերանց ոտք Աւետարանչի հաճելոյն խաղաղութեան, որպէս Աւետարանչի բարութեանց, զի լսելի արարից զփրկութիւն քո ասել ցՍիոն, թէ թագաւորեացէ քեզ Աստուած»։ Եւ թէ՝ «Հոգի Տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ եւ հօծ խակ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զքեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զթողութիւն, և կուրաց տեսանել, կոչել ամ Տեառն ընդունելի, և օր հատուցման Աստուծոյ մերոյ. մխիթարել զամենայն ողբալսն»։ Եսայ. ԾԲ. 7։ ԿԱ. 1. 2։

Այնպէս մարգարէն Դաւիթ մարգարէական հոգւով ներկանելով զքրիստոսական շնորհն վրիպագործութեան ընդ ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, նախապատշակ ազդեցութիւն տայ շնորհընկալ հաւատացելոց այսպէս։ «Օր՝ նեցէք զՏէր և օրհնեցէք զանուն նորա, աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա»։ Սաղմ. ՂԵ. 3։

Զի՞նչ է աւետարանն Յիսուսի Քրիստոսի. զի՞նչ այլ. եթէ ոչ ճշմարիտ հրատարակիչ երկնայարդեւ աւետեաց 'ի վերայ քան զամենայն հասողութիւն մարդկային մտաց ըստ բա-

նի սրբազան առաքելոյն Պօղոսի առ հաւատացեալսն Ճշմարտութեան սրբոյ աւետարանին։ «Խրիմ լուաք զհաւատն ձեր որ 'ի Քրիստոս Յիսուս 'ի ձեր մեր, և զսէրն՝ զոր ընդ ամենայն սուրբս ունիք, վասն յուսոյն, որ պահի ձեզ յերկինս՝ զորմէ լուարուք բանիւն ճշմարտութեան աւետարանին ոմ եհաս առ մեզ, որպէս ընդ ամենայն աշխարհս աճէ և պտղաբերէ, որպէս 'ի ձեր եւս մինչի. յօրէ յորմէ լուարուք և ծանեայք զշնորհսն Աստուծոյ ճշմարտութեամբ »։ Կող։ Ա։ 4—7։

Սուրբ աւետարանն խոստանայ շնորհել ճշմարիտ հաւատացելոց զաւետիս Աստուածապարգև և ճրիտաւոր շնորհաց և փրկութեան հոգւոց և անմահ կենդանութեան 'ի Քրիստոս Յիսուս Ննջեցելոց։ Բայց այնմ՝ «Որ փրկեաց զմեզ և կոչեաց 'ի կոչումն, ոչ ըստ գործոց մերոց, այլ ըստ իւրումն յառաջադրութեանն և շնորհաց։ որ տուաւ մեզ 'ի Քրիստոս Յիսուս։ յառաջ քան զժամանակսն յաւիտենից։ Բայց յայտնեցաւ այժմիկ յերևիլ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։ որ խափանեաց զմահ, և լուսաւոր արար զկեանս, և զանեցութիւն 'ի ձեռն աւետարանին»։ Բ։ Տիմ։ Ա։ 9։ 10։

Սուրբ աւետարանն է ճշմարիտ վարդապետարան երկնաւոր վարդապետին մերոյ Յիսուսի Քրիստոսի և մարգարէական փրկագործութեան նորին սքանչելի թանգարան։ է և Աստուածային հոգեկեցոյց օրհնութեան ամենացանկալի շտեմարան, ըստ հեռևեալ վկայութեանց։ «Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց, ուսուցանէր 'ի ժողովուրդսն նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան»։ Մատթ։ Գ։ 23։ «Զայս զիտեմ 'ի զգէն առ ձեզ լուութեամբ օրհնութեան աւետարանին Քրիստոսի նկից»։ Հռովմ։ ԺԵ։ 29։

Աստուածարանք նկնզեցւոյ առաջին ամենայն ամենայն աստուածարանութեան և վճռեն այսպէս։ «Աստուածարանութիւնն է բան զԱստուծոյ, և զԱստուածայնոյն։ Յորս սուրբն

Կիւրեղ այն օրինակ վարդապետելով զսուրբ զաւետարանն, այսպէս ասէ. «Բոլոր աւետարանական ճշմարիտ բանք են զԱստուծոյ ձրիատուր շնորհաց, և զարքայութեան փառայ՝ զԱստուածային մարդասիրական փրկագործութեանց, զոր աւետարանեաց ինքնին իսկ կենարարն մեր Յիսուս Քրիստոս Աստուածորդին փրկիչն աշխարհի. սրպէս գրեալ է: «Եւ յետ մատնելոյն Յովհաննու՝ եկն Յիսուս 'ի Գալիլեայ, քարոզէր զաւետարանն Աստուծոյ և ասէր թէ կատարեալ է ժամանակ. և հասեալ Արքայութիւն Աստուծոյ, ապաշխարեցէք և հաւատայէք յաւետարանն»: Մարկ. Ա. 14. 15:

Սուրբ աւետարանն Յիսուսի Քրիստոսի է անդրանիկ և միակ պարծանք հաւատոյ ողջամիտ և ուղղափառ հաւատացելոցս, յորում բայցայտ և անաղօտ երևին Աստուածային ամենակարող զօրութիւնն և սքանչելի փրկագործութիւն Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ և Աստուծոյ, զորմէ և սրբազան առաքեալն Պօղոս պարծանօք քարոզէ: «Զի ո՛չ ևթէ ամօթ ինչ համարիմ զաւետարանն, քանզի զօրութիւն Աստուծոյ է 'ի փրկութիւն ամենայն հաւատացելոցս». Հռովմ. Ա. 16:

Աւետարանն է յայտարարութիւն Աստուածային բարեաց խոստացեալ առատապարգև շնորհաց փրկագործ անօրէնութեան Քրիստոսի. է և երկնապարգև գանձուցն սքանչելի զանձարանն. վասն որոյ սուրբն Յովհան Ոսկեբերան 'ի վերայ բնաբանիս այսորիկ. «Պօղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի. կոչեցեալ առաքեալ, որոշեալ յաւետարանն Աստուծոյ». Ա. 1. զրէ. «Ոչ որովհետև ո՛չ զասասս մարգարէից, ո՛չ զսպառնալիս հին օրինաց յանդիման առնէ մեզ հրաշալի սուրբ աւետարանն Յիսուսի Քրիստոսի, այլ զի՞նչ, թողութիւն մեղաց քարոզէ, ազատութիւն 'ի դիւական և 'ի դժոխային տարտղնապէ, և 'ի բռնութեանց, նա մանաւանդ աւետարանէ մեզ հաւատացելոցս զանճառելի շնորհս Աստուածային զանազան պար-

գևաց, և ճառագայթէ 'ի հոգիս մեր զանազան լոյս ճշմարտութեան Քրիստոսական սուրբ կրօնից մերոց։

Սուրբ Աւետարանն աւետէ մեզ զերանաւէտ յոյս յաւիտենական փառաց երկնից արքայութեան, փարատէ 'ի սրտից և 'ի մտաց մերոց զերկիւղն ծառայական և տպաւորէ 'ի մեզ զհոգեզուարճ սէրն որդիական առ Հայրն Աստուած, և զնորին մարդասիրական բարերարութիւն առ մեզ։

Ահա զպէտսն շնորհաց սուրբ աւետարանին սքանչելի ինն խորհրդածէ Հրեշտակակրօն վարդապետն մեր Սուրբն Գրիգոր Նարեկացի։ «Ամ. զայս միայն է պահեցեալ ինձ նշոյլ յիշատակի փրկութեան յուսոյ, զի Քրիստոսեան աւետարանն կեանս է ամենեքին 'ի կերպարանաց պատկերի բանին ծանուցեալ, որով առ մեզանն դարձն, առ պարտիսն շնորհն, առ եղծումն նորոգութիւնն, առ անօրէնութիւնն, քաւութիւնն, առ վէրն՝ բժշկութիւնն, առ վտանգն՝ անպորրութիւն, առ պատիժն՝ ներումն։ • • առ հուրն՝ անձրևն, առ պատուհասն՝ պարգևն, առ ակնկալութիւն սատակմանն՝ ձիրն, առ դրախտարան մահուն, կենացն ապատութիւն։ Եւ զի՞նչ է ինձ զայսքանեաց յիշմանց 'ի թիւ արկանել, և ո՛չ զանձառելիսն սատանօր դասել, յիշատակաւ Հօրն բարձրելոյ՝ յորդին կցորդութիւն, յանուն միածնին առ Հայրն ընտանութիւն, սոցին ակնարկութեամբ ընդ հոգւոյն հաղորդութիւն, խաչին փրկանք, բանին սփոփութիւն, բարւոք վարձ կամացս առ կշռութիւն գործոցն, աւազանն կենդանարար հաշտութեանն միջնորդութիւն, և այլք ամենայն անթիւ բարիք 'ի բարեբարէն բարդեցեալք, ապաւք 'ի հարկէ, արձակք 'ի լծոյ, իշխանականք և ո՛չ իշխեցեալք։ Այսոքիկ են՝ որ ինձ 'ի միջ զառնութեանս մահու, կեանս անտարակոյս աւետարանն»։ Նար. Լ.Գ։

Իսկ Սուրբն Դիոնէսիոս Արիսպագացին 'ի գիրս եկեղեցական քահանայապետութեան յերրորդ ճառի զսուրբ աւետարանն Քրիստոսի գլուխ Աստուածարանութեան անուանէ։

«Զան զի բոլոր աւետարանն է, ասէ, իսկապէս Աստուածագործ տնօրէնութիւն յաղագս ճառելոյ անտանօր զԱստուածային տնօրինական գործս, և մեծահրաշ խորհուրդս սքանչելի մարդեղութեան Քրիստոսի, յորում բացայայտ աւետարանի ամենեցուն յայտնաւոր սրբազան աւետարանչաց անուն։ Եւ բանն մարմին եղև, և բնակեաց 'ի մեզ, և տեսաք զփառս նորա իբրև զմիածնի առ 'ի Հօրէ լի շնորհօք և ճշմարտութեամբ». Յովհ. Ա. 14։ Ապա ուրեմն՝ աննկարելի յանդգնութիւն է զԱստուածաւանդ անուն Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի փոխել և անուանել զնա Վարք Յիսուսի Քրիստոսի, պատմութիւն Վարուց Յիսուսի Քրիստոսի։

ԲԱՆ ԵՐԿՐՈՐԴ։

Ի վերայ բանին Երջանիկ Ծերունւոյն Սիմէօնի, որ խորհրդաւոր բարեբանութեամբ առաց առ Սուրբ Կոյսն Աստուածածին՝ վասն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի թէ՝ «Ահա սա կաց 'ի զլորումն և 'ի կանգնումն բազմաց 'ի մէջ Իսրայէլի և 'ի նշան հակառակութեան». Զուկ. Բ. 34. Հելլենական մատենին վարք Քրիստոսի ծանօթութիւն ասց գրելով այսպէս. Որք հաւատացեալն էին՝ կեցցին, և որք ոչն հաւատան՝ դատապարտեսցին. զոր եղիցեն պատճառք փրկութեան բազմաց. և անհաւատացն կրեսցեն համարեցոյն պատճառք՝ թէպէտ և առեալ անհաւատութեանն ոչն, և ոչ յիւրոց ինչ առաջին կամաց։ Եղեալ 15. Ծանօթ. 3։

Բայց մեծապէս սխալի Հելլենական. նախ՝ զի առաջին հաստատութիւն չէ բացատրութիւն կամ ծանօթութիւն ծերունւոյն Սիմէօնի խորհրդաւոր բանից, այլ կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի տուեալ իշխանութեան և հրամանի սրբազան աւանդեցին զասուց, զոր յաւուր սքանչելահրաշ Համբարձմանն իւրոյ առ Հայրն երկնաւոր, ետ նոցա ըստ աւետարանական վկայութեան. «Եւ ասէ նոսա, երթայք յաշխարհ ամենայն,

և քարոզեցէք զաւետարանն արքայութեան ամենայն արարածոց, որ հաւատացէ, մկրտեցի՛ կեցցէ, և որ ոչն հաւատացէ՝ դատապարտեսցի»։ Մարկ։ Ժ.Զ։ 15։ 16։

Երկրորդ՝ տալով զայս ծանօթութիւն 'ի վերայ բանին երանելի Ծերունւոյն Սիմէօնի։ Որով եղիցի նա պատճառք փրկութեան բազմաց, և անհաւատիցն կորստեան համարեալի պատճառք՝ թէպէտ և առնոյա անհաւատութեանն այն և ոչ վերոյ ինչ առաջին կամաց, տարակուսելի առնէ զընդհանրական շնորհս անձառելի փրկագործ մարդեղութեան Տեառն մերոյ։ վասն զի մեք հաւատամք և խոստովանիմք թէ Յիսուս Քրիստոս Աստուածն մեր՝ նոյն ինքն է փրկիչն և փրկութիւն ազգի մարդկան, և ոչ պատճառ փրկութեան մերոյ անուանի և ոչ խոկպատճառ կորուսելոցն և զլրելոցն յանհաւատութեան խորխորատ, ոչ մերձաւոր և ոչ հեռաւոր, ոչ առաջին և ոչ հետեւալ կամօք, այլ նոյն ինքն Յիսուս Քրիստոս եղեւ, և է փրկիչ աշխարհի, և նոյն ինքն է քննող զազանեաց արդարաքննին դատաւոր, ըստ քարոզութեան սուրբ գրոց։ «Զօրացարո՛ւք ձեռք լքեալք, և ծունկք կթուլեալք, մխիթարեցարո՛ւք կարճամի՛տք սրտիւք, զօրացարո՛ւք և մի՛ երկնչիք։ Ա.Հաւասիկ Աստուած մեր հատուցանէ զդատաստան, և հատուցէ, ինքնին եկեսցէ և փրկեսցէ զմեզ։ Յայնժամ աչք կուրաց բացցին, և ականջք խլեաց լուիցին։ Զի ա՛հաւասիկ Տէր ելանէ արար մինչև 'ի ծագս երկրի։ Ասացէ՛ք դստեր Սիովնի։ ահաւասիկ փրկիչ քո հասեալ գայ և ունի զվարձս իւր ընդ իւր, և գործ իւր առաջի երեսաց իւրոց, և կոչեսցէ զնա ժողովուրդ սուրբ փրկեալ 'ի Տեառնէ»։ Եսայ։ Լ.Ե։ 3։ ԿԲ 11։

«Ուրախ լի՛ր յոյժ դո՛ւստր սիօնի, քարոզեա՛ դո՛ւստր Երուսաղէմի, ահա՛ թագաւոր քո գայ առ քեզ, արդար և փրկիչ, նոյն հեզ և հեծեալ 'ի վերայ էշոյ և յաւանակի նորոյ։ Եւ փրկեսցէ զնոսա Տէր Աստուած նոցա յաւուր յայնմիկ իբրև զոչխար զժողովուրդս իւր»։ Զաք։ Թ։ 9։ 16։

«Առաջնորդեա՛ ինձ 'ի ճշմարտութեան քում, և ուսո՛ զիս, զի դու ես Աստուած փրկիչ իմ, և ես քեզ համբերի զօրհանապազ։ Ասացին յամենայն ժամ մեծ է Աստուած և ոչ սիրեն զփրկութիւնս քո։ Ես աղքատ և անանկ եմ, Աստուա՛ծ օգնեա՛ ինձ՝ օգնական և փրկիչ իմ ես, և Տէր իմ մի՛ յամենար»։ Սաղմ։ ԻԴ։ 5։ԿԹ։ 6։ 7։

«Եւ Զաքարիա Հայր (Յովհաննու Մկրտչի) լցաւ Հոգւով սրբով՝ մարգարէացաւ և ասէ։ Եւ յարոյց եղջիւր փրկութեան մեզ 'ի տանէ դաւթի ծառայի իւրոյ, որպէս խօսեցաւ բերանով սրբոց։ որք յաւխաւնէից մարգարէքն նորա էին, փրկութիւն 'ի թշնամեաց»։ Ղ.ուկ։ Ա։ 67։ 68։

«Եւ ասէ Մարիամ, մեծացուցէ անձն իմ զՏէր, և ցընծացաւ Հոգի իմ յԱստուա՛ծ փրկիչ իմ»։

«Եւ ասէ հրեշտակն, մի՛ երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ զուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն, զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ»։ Ա.նդ։ Ա։ 46։ Բ։ 10։ 11։

«'Ի սորա զաւակէ Աստուած ըստ աւետեացն յարոյց Իսրայէլի զփրկիչն Յիսուս»։ Գործ։ ԺԳ։ 23։

«Եկեսցէ 'ի սիօնէ փրկիչ և դարձուցէ զամբարշտութիւնս 'ի Յակովբայ»։ Հռովմ։ ԺԱ։ 26։

«Քանզի երևեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան, որ խրատէ զմեզ, զի ուրացուք զամբարշտութիւն, և զաշխարհական զցանկութիւն, զդաստութեամբ, և արդարութեամբ, և Աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի։ Եւ ակն կալցուք երանելի յուսոյն և յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որ եա զանձն վասն մեր, զի փրկեսցէ զմեզ յամենայն անօրէնութենէ, և սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական նախանձաւոր գործոց բարութեան»։ Տիտ։ Բ։ 12։ 14։

«Մեք տեսաք և վկայեմք, զի Հայր առաքեաց զորդին իւր

Այս Յիսուս Քրիստոս փրկիչն մեր ինքնին իսկ տիրապէս զողով փրկութիւն ազգի մարդոյն՝ հակառակ նորին ինքնազօր սքանչելի փրկագործութեան չկարենք համարձակիլ ասել պատճառ փրկութեան. բայց չնախալիմք՝ յորժամ ասիցիմք. պատճառ զանազան կատարելութեանց մերոց՝ զոր շնորհեաց մեզ սքանչելի հմտերութեամբ 'ի կամաւոր չարչարանս իւր և 'ի հնազանդութեան մահու չարի և մահու խաչի։

Պատճառ եղև նախ՝ արդիւնաւորութեան կամաւոր զոհման և ապաշխարութեան մերոյ, զոր և ինչն իսկ քարոզեաց. «Եթէ այսպէս պարտ էր չարչարիլ Քրիստոսի և յառնել 'ի մեռելոց յաւուր երրորդի, և քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց. Ղուկ. ԽԴ. 46։

Երկրորդ՝ ասկալի չարչարանքն և խաչելութիւն փրկչի մերոյ Յիսուսի Քրիստոսի եղև պատճառ հաշտութեան մերոյ ընդ Հօր Աստուծոյ. ըստ այնմ. «Յայտնեաց Աստուած զսէրն իւր 'ի մեզ. զի մինչդեռ մեղաւորքն էաք՝ Քրիստոս վասն մեր մեռաւ, արդարն ևս առաւել յարդարանալս մերում այժմիկ արեամբ նորա ապրեցուք նովաւ 'ի բարկութենէ անտի, զի եթէ մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ որդւոյ նորա. արդարն ևս առաւել 'ի հաշտելս մերում ապրեցուք կենօքն նորա։ Հռոմ. Ե. 8—10։

Երրորդ՝ պատճառ է Յիսուս համարձակութեան արդարոց մտանելոյ յերկնային վառս. և վայելելոյ անդադար զերանութիւնս անխախտն կենաց, զոր շնորհեաց միջնորդութեամբ պատարագի Աստուածային անձին իւրոյ 'ի սեղան խաչին. ըստ այնմ. «Թէպէտ որդի է՝ ուսաւ 'ի չարչարանաց առեալ զհնազանդութիւն։ Եւ իբրև կատարեցաւ՝ եղև հնազանդելոց իւրոց պատճառ փրկութեան յաւիտենից, և անուանեցաւ յԱստուծոյ քահանայապետ յաւիտենից, ըստ կարգին Մելքիսեդեկի։ Եբր. Ե. 8. 10։

«Ունիմք այսուհետև ի զբարբք, համարձակութիւն 'ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի, զոր նորոգեաց մեզ ճանա-

պարհ նորոգ և կենդանի 'ի ձեռն վարագուրին, այսինքն է մարմնոյ իւրոյ· և քահանայ մեծ 'ի վերայ տանն Աստուծոյ»· Անդ· Ժ· 19· 20:

«Սիրելիք՝, եթէ սիրաք մեր զմեզ ո՛չ ապաստանիցին համարձակութիւն ունիմք առ Աստուած, և զոր ինչ հայցեմք՝ առնուցուք 'ի նմանէ, զի զպատուիրանս նորա պահեմք և զհաճոյս առաջի նորա առնեմք»· Յովհ· Գ· 21:

Ոչինչս Յիսուս Քրիստոս չէ պատճառս դրման անհաւատից, այլ է զատաւոր արդար, զատապարտիչ իրաւամբ և արդարութեամբ զԼրելոցն 'ի խորխորատն անհաւատութեան և մոլեկան վարուց, ըստ հեռևեալ վկայութեանցս· «Հանձարեցք սրտիք լուարուք ինձ, և մի՛ լեցի ինձ ամբարշտել առաջի Տեառն, և առաջի ամենակալին աղմկել զերաւունս: Այլ հաստատէ մարդոյ ըստ իւրաքանչիւր գործոց նոցա»· Յոբ· ԼԳ· 10· 11:

«Եւ ապագայ հաստատէ զվրէժխնդրութիւն մինչև բարձցէ զլրութիւն ամբարտաւանից, և զգաւազան մեղաւորաց խորտակեցէ· մինչև զատեցէ զդատաստան ժողովրդեան իւրոյ, և զուարճացուցէ զարդարս ողորմութիւն իւր»· Սիրաք· ԼԵ· 23· 25:

«Աստուած զատաւոր արդար, հզօր և երկայնամի՛տ, որ ո՛չ ածէ զբարկութիւն իւր զօրհանապազ»· Սաղմ· Է· 12:

«Ես եմ Աստուած, և չի՛ք այլ ոք բաց յինէն: Զի ինձ կրկնեցէ ամենայն ծունր և խոստասցի լեցի ամենայն լեզու Աստուծոյ: Եւ ասասցէ թէ՝ արդարութիւն և փառք առնեա եկեսցին, և ամաչեսցին ամենեքեան՝ որք որոշեն զանձինս իւրեանց 'ի Տեառնէ»· Եսայ· ԽԵ· 21· 24:

«Ես Տէր քննեմ զսիրտս և փորձեմ զերիկամունս, տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհաց իւրոց, և ըստ պտղոյ գործոց իւրեանց»· Երեմ· ԺԷ· 10:

«Զի զալոց է Որդի մարդոյ փառաւք Հօր իւրոյ, հանդերձ հրեշտակօքք իւրովք, և յայնժամ հատուցէ իւրաքանչիւր

զգործս իւր». Մատթ. ԺԶ. 27։

«Եւ ոչ եթէ Հայր դատէ զոք, այլ ամենայն դատաստան եա որդւոյ իւրոյ... Ոչ կամիմ ես յանձնել առնել և ոչինչ այլ որպէս լսեմ՝ դատեմ և դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս». Յովհ. Ե. 22. 30։

'Ի գէպ գան ասասնոր բանք ապացուցութեան եօթն կարգեան անուանեալ մասնին 'ի քարոզն երրորդ կարգի. Գլ. Ե. թՂԹ 298. յորում առեալ 'ի վարդապետութենէ Օգոստինոսի գրեալ է. «Ասա՛ռ լերուք սիրելիք, և մի՛ ժպրհիք կոչել զՔրիստոս պատճառ դատապարտութեան չարաչար մեկնեալ զբան մարգարէութեանս. թէ՝ կայ սա 'ի զլորումն։ Մի՛ զկորստեան պատճառ 'ի միրայ Քրիստոսի արկանէք, որոյ որպէս անաչառ է արդարութիւն, նոյնպէս ամբաւ է ողորմութիւն։ Հայեցարո՛ւք 'ի թագաւորսն երկոսեան, զորս առաջի առնեմ ձեզ այսօր 'ի Նաբուգոդոնոսոր, և 'ի Փարաւոն։ Ասացէ՛ք, զի՞նչ եղբարք սա խատասրոեալ եկաց մնաց անգեղջ, և նա սպաշխարութեամբ վճարեաց զկեանս։ Թէ 'ի բնութիւն հայիք, իւրաքանչիւր էին նման միմեանց, զի երկոքին խակ էին մարդ. թէ յասելոնն հայիք, զարձեալ նման միմեանց էին, զի երկոքին խակ էին թագաւոր։ Թէ զվարս և զքարս երկոցունց քննեք, զարձեալ միմեանց նման էին, զի երկոքին խակ եղեն մեղաւորք։ Ապա թէ զԱստուածատուաք պատուհասն երկոցունց մտածէք, երկոքին խակ սատիկ պատժեցան։ Արդ՝ ո՞ւստի եղև միոյն զլորումն, և միւսոյն կանգնումն, ո՞ զվախճան դոցա ապար այլատարաց. լուարո՛ւք զի՞նչ Օգոստինոս ասէ։ Միոյն տեսեալ զԱստուածատուսն բարկութիւնն՝ յիշատակութեամբ անօրէնութեան յոգոց եհան. խակ միւսն անձնիշխանութեամբ ամենաողորմ ճշմարտութեան Աստուծոյ ընդդէմ կենեցաւ։ Տեսէք, զի ոչ Աստուծոյ է գրելի կորուստ Փարաւոնի, այլ նմին խակ Փարաւոնի։

Արժան է գիտել, զի բան Սիմէոնի, ելթէ. «Սա կայ 'ի գլուխն և 'ի կանգնումն բազմաց, 'ի նշան հակառակութեան», ունի յարաբերութիւն ընդ առաջին բանիցն Իւրոց, որովք բարեբանէ զՏէր Յիսուս յասելն, «Լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց՝ և փառք ժողովրդեան քոմ Իսրայէլի»։ Այսու երանելի Ծերունին Սիմէոն մարգարէանայ Հոգւով սրբով, ելթէ այս փրկիչն աշխարհի Յիսուս Ծագեալ իբրև զանեղօտ լոյս ճշմարտութեան, և որ մերձենայ առ սա անարատ հաւատոյ աչօք, արդարանայ և ընդունի զլոյս փրկութեան և շնորհաց. իսկ որք հեռանան 'ի սմանէ մոլութեամբ և մոլորութեամբ իւրեանց, մնան 'ի խաւարի կորստեան և գառապարտութեան, զի ինքն Յիսուս է արեգակն արդարութեան, ըստ այնմ. «Զան զթութեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ, որով այց արար մեզ արեգակն 'ի բարձունց»։ Մատթ. Դ. 2։ Ղուկ. Ա. 78։

Այլ թէպէտ լոյս արեգական երևեցաւ Յիսուս փրկիչն մեր 'ի բարեբարեկ ամենեցուն, բայց յԱստուածաշնորհ բարեբարութենէ անտի շնորհաց և փառաց զբիկեալ զամենին բազումք. քանզի 'ի ծագել արեգական աչք բժոնեալք և ցաւադնեալք վնասին 'ի լուսոյ նորին, քան թէ օգտին ինչ 'ի նմանէ. նոյնպէս և աչք կուրացեալք ոչ երբէք հաղորդին լուսաձաձանչ նշուլից նորա, ապէս և որք փակեն զպատուհանս իւրեանց վարագուրաւ ընդդէմ ճառագայթիցն արեգական, մնան 'ի խաւարի։

«Եւ այս իսկ է դատաստան, զի լոյս եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեան։ Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ ըզ լոյսն, և ոչ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա։ Իսկ որ առնէ զճշմարտութիւն, գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա թէ՝ Աստուծով գործեցան»։ Յովհ. Գ. 19—21։

Ապա՝ Յիսուս Քրիստոս փրկիչն մեր անհաւատից չեղև, և չէ երբէք

կորուստն պատճառ, այլ զի ըստ առաքելոյն Պօղոսի՝ «կամի, զի ամենայն մարդիկ կեցցեն, և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն». Ա. Տիմ. Բ. 40։

Ընթերցիր և զբան մեկնութեան սուրբ վարդապետին մերոյ Իշնատիոսի. «Ասէ ցՄարիամ մայր նորա, սա կայ 'ի կանգնումն և 'ի զլորումն բազմաց 'ի մէջ Իսրայէլի, և 'ի նշան հակառակութեան. յայտնի է այս մարգարէութիւն, զի և մեկնութեան չեն ինչ պէտք. քանզի բազումք կանգնեցան 'ի վաւ 'ի զլորմանէ անտի յառաջին յանցանացն և յանհաւատութէնէ և 'ի կորստական մեղացն՝ յոր ըմբռնեցան, շնորհօքն Քրիստոսի կանգնեալք, 'ի վերս ամբարձան, և հաստատեցան 'ի վերայ վիմին, ըստ այնմ։ Եհան զիս 'ի գրոյ առաւապանաց 'ի կաւոյ և 'ի տղմոյ և կացոյց 'ի վերայ վիմի զոտս իմ, և ուղղեաց զգնացս իմ։ Արդ՝ ըստ որում որք զպատշաճն հաւատս նորա ընծայեցին, կանգնեցան, կացին 'ի վերայ հաստատուն վիմին։ Ընդ նմին և որք անհաւատարմութեամբ վարակեալք խոտորեցան 'ի նմանէ, զլրեալք ծածկեցան 'ի խորս խաւարին, որպէս զալիրքն և փարիսեցիքն և այլք, որք ոչ հաղորդեցան փառաց նորա։ Յայս առնեն և զայս գիրք մարգարէին։ Եղից ասէ 'ի հիմունս վէմ ընտիր և պատուական, և ամենայն որ հաւատացէ՝ մի՛ ամաչեցէ, զարձեալ վէմ զլրման և քար գայթակղութեան։ Արդ զոր մարգարէքն զուշակեցին ծածուկ խորհրդով, զնոյն Սիմէօն թարգմանեաց յայտնապէս 'ի վերայ Տեառն մերոյ։ Սա կայ ասէ 'ի կանգնումն, և 'ի զլորումն բազմաց»։

ԲԱՆ ԵՐՐՈՐԴ։

Ընթեռնումք 'ի սուրբ աւետարանի. Յիսուս փրկիչն մեր առակօք սկսաւ քարոզել խառատիրա ժողովրդեանն Իսրայէլի, և մինչ առանձնացաւ՝ խնդիր մատուցին աշակերտքն նմա, ասէին և գրեալ է. «Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա, ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նոսա. նա պատասխանի ետ և ասէ ցնոսա, քանզի ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան երկնից, և նոցա չէ տուեալ». Մատթ. ԺԳ. 10։ Մարկ. Դ. 11։ Ղուկ. Ը. 10։

Այսց բանից Քրիստոսի ծանօթութիւն տայ Հեղինակն Վարք Քրիստոսի անուանեալ մատենի. երես 90. ծան։ 1. Արքայութեան Մեխային, թագաւորութեանն Քրիստոսի Իվերայ երկրի՝ հաստատելով և կարգաւորելով զեկեղեցի։

Եւ զի՞նչ յարմարութիւն ունիցի այս ընդ վերոյիշեալ բանից Յիսուսի. այսչափ հետաւոր, միթէ՞ և օտար իսկ են 'ի լուսաւոր բանից Յիսուսի ծանօթութիւնք Հեղինակին։

Քանզի նոյն ինքն վարդապետն ճշմարտութեան Յիսուս Քրիստոս բացատրէ, զբան իւր յասելն. «Զի որ գուցէ տայցի նմա և յաւելցի, և որ ոչն գուցէ, և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ. վասն այնորիկ առակօք խօսիմ ընդ նոսա, զի տեսանեն և ոչ տեսանեն, և լսեն և ոչ լսեն, և ոչ առնուն 'ի միտ։ Եւ կատարի առ նոսա մարգարէութիւնն Եսայեայ՝ որ ասէր, լսելով լուիջիք և մի՛ իմացջիք, և տեսանելով տեսջիք, և մի՛ տեսջիք։ Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ականջք իւրեանց ծանրանս լուան։ Եւ զաչս իւրեանց կապուցին, զի մի՛ երբէք տեսցեն աչօք, և ականջօք լուիցին. և սրտիւք իմացին, և դարձցին և բժշկեցից զնոսա. բայց ձեր երանի է, աչացդ՝ զի տեսանեն. և ականջաց ձերոց՝ զի լսեն։ Մատթ. ԺԳ. 12—17։

Ահա այս է բացայայտ ծանօթութիւն խորհրդաւոր բանիցն Յիսուս փրկչին մերոյ՝ զորս ծանեալն աշակերտքն է՝ զուգակ լինելով շնորհաց երկնաւոր վարդապետին տիեզերաց. վասնորոյ ասաց ցնոսա. «Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան երկնից». այս է, 'ի ձեզ ներդործեցան շնորհք փրկարար խորհրդոցն երկնից արքայութեան, իսկ 'ի խառնիս ոչ երբէք տեղի գտին, այլ ծածկեցան 'ի նոցունց: Յայս միտս գրեն երանելի առաքեալքն Իգնատիոս և Յովհաննէս ծորձորեցի՝ հետևելով առաքելական վարդապետութեան Յիսուսի Քրիստոսի. «Ասուցանէ աշակերտացն միոյն զառակին խնառս, և յայտնէ նոցա թէ՝ այսու գիտութեամբ ջահ վառեաց գնոսա յառաս լուսոյ անտի, զոր ինքն ընդունէր, և ոչ օրէն է նոցա թաղուն լինել, այլ ունին նոքա 'ի ժամանակէ անտի իբրև զլոյս սատակ սիրել ընդ բնաւս, որ յայնժամ 'ի Պաղեստին ծածկեալ կային: Եւ այս երկիցս ասացեալ որք զանան զպտուղն ասելով որ ունիցի զգործս բարիս՝ և յաւելցին 'ի նմա սերմանք բանին, իսկ որ ոչ կամեցաւ ասել զպտուղ բարութեանց՝ 'ի բնէն և բարձցի 'ի նմանէ. ըստ այնմ. Ամենայն ուր որ բերէ զպտուղ, սրբէ զնա, և որ ոչ բերէ զպտուղ կարէ զնա»: 'ի Մեկն. Զուկ. Գլ. Ը:

«Զայս ասելով՝ ոչ թէ հարկ ինչ կամ վիճակ մուծանիցէ առանձինն հասեալ նոցա, այլ զի սոքա ապաւաք էին 'ի չարեաց, և նոքա չարեաւք յղփացեալ, իսկ յանձն չար արուստ խմաստութիւն ոչ մտանէ, ասէ Սողոմոն...: Այսինքն՝ թէ յորժամ յօժարութեամբ ոք, և փոյթ յանձին ունիցի՝ ասցի նմա ամենայն ինչ Աստուածակոյս կոչմանէ անտի: Իսկ յորժամ յայնցանէ թափուր լցէ ոք և ոչ լիցի նոքաստ յանձնէ, ապա և ոչ Աստուծոյ ինչ ասցի նմա, որպէս ասէ, թէ զոր ունիցի բարձցի 'ի նմանէ...: Եւ զարձեալ զի ոյր գուցէ պտուղ բարեաց՝ ասցի նմա լսել զառակաւոր խմաստս հոգւով, և ոյր ոչ գուցէ՝ զլսելն և բարձցի 'ի նմանէ, զի մի՛ խմացի. ըստ այնմ՝ ամենայն

ուռ որ ոչ բերէ զպտուղ՝ կտրէ զնա, և ամենայն տունկ զոր ոչ տնկեաց Հայրն իմ երկնաւոր, այլ չարն՝ խլեացի...։ Եթէ չտեսանէին, ապա պարտ էր զաչս նոցա բանալ։ Իսկ եթէ բըՏնութեան չէր կուրութիւն, այլ կամացն և անձնիշխանութեան, զայն զի՞նչ հարկ էր առնել, վասն այնորիկ ոչ ասաց լոկ թէ չտեսանեն, այլ թէ տեսանեն և ոչ տեսանեն. քանզի տեսանէին զդէս հանեալ՝ և ասէին բնհեղգերուզաւ հանէ, և ըսէին զի առ Աստուած մերձեցուցանէր և բազում միաբանութիւն խօսէր զնոր ընդ Աստուծոյ, ասէին թէ չէ՛ դա յԱստուծոյ, կամ թէ տեսող ասեն զինքեանս օրինօքն և կոյրք են, և ըՏեն զքան մարգարէին, և ոչ առնուն 'ի միտ զնկնալն, զոր մարգարէքն գուշակեցին ըստ այնմ։ 'Ի զատասան ելի յաշխարհս, զի որք ոչ տեսանենն՝ տեսցեն, և որք տեսանենն՝ կուրացին»։ 'Ի Մեկն. Մատթ. Գ.Ի. ԺԳ։

Ապա ուրեմն կարի տխաքեալ է Հեղինակն 'ի տալն զայս ծանօթութիւն. թէ՝ արքայութեան Մեսիային, թագաւորութեան իւրոյ երկրի հաստատելով և կարգաւորելով զնկնելոյն, այլ պարտ էր նմա յատակ և պարզ հոգւով ենլատել զնշանաւոր զօրութիւն խորհրդաւոր բառիցն. զոր յայտնեաց Ցիսուս աշակերտացն ասելով. «Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան երկնից, և նոցա ոչ է տուեալ»։

Քանզի այս սքանչելի խորհրդոյս տեսութիւն ոչ միայն յայտնեցաւ սրբազան աշակերտացն և առաքելոցն Ցիսուսի, և ոչ միայն նոքա ծանօթ եղեն, այլ և զնոյն քարոզել և աւետարանել փութացան 'ի մէջ հաւատացելոց հրէից և հեթանոսաց. ուստի դրէ սրբազան առաքեալն Պօղոս առ Հռոմայեցիս. եթէ՝ «Ո՛չ կամիմ եղբա՛րք, եթէ ոգէտք լիցէք խորհրդոյս այսորիկ, զի մի՛ յանձինս ձեր լիցէք իմաստունք, զի կուրութիւն փոքր 'ի շատէ եղև Իսրայէլի, մինչև լրումն հեթանոսաց մտցէ, և ապա ամենայն Իսրայէլ կեցցէ, որպէս և գրեալ է, եկեսցէ 'ի Սիոնէ փրկիչ և դարձուսցէ զամբարշտութիւնսն

'ի Յակոբայ։ Հռոմ. ԺԱ. 25. 26։

Խորհուրդ ասելով այս իմանալ նախ՝ զԱստուածային մարդասիրական ազատկամայն նախատահմանութիւն 'ի փրկութիւն ազգի մարդկան. մանաւանդ զի խորհուրդ էր ծածկեալ 'ի մարդկային գիտութենէ աքանչելահրաշ յայտնութիւն մարդեղութեան բանին Աստուծոյ։ Արդարև անճառելի խորհուրդ էր մարդասիրական գլուխգործութեան ձրիատուր շնորհաց Յիսուսի. զոր քարոզեցին սրբազան առաքեալքն՝ մանաւանդ սրբազան առաքեալն Պօղոս գրէ այսպէս «Եցոյց մեզ զխորհուրդ կամաց իւրոց, ըստ հաճութեան իւրում, զոր առաջագոյն եւ 'նովաւ». Եփես. Ա. 9։

«Զխորհուրդն որ ծածկեալ էր 'ի յաւիտեանց և յազգաց, որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց, որոց կամեցաւ Աստուած ցուցանել. թէ զի՞նչ է մեծութիւն փառաց խորհրդոց 'նորա 'ի հեթանոսս, որ է Քրիստոս 'ի ձեզ յոյսն փառաց». Կող. Ա. 26. 27։

«Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն Աստուածպաշտութեան, որ երևեցաւ մարմնով, արդարացաւ Հոգւով, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ 'ի հեթանոսս, հաւատարիմ եղև աշխարհի և վերացաւ փառաւք». Ա. Տիմ. Գ. 16։

Զայս զարմանապանչ խորհուրդն լուսաւոր մտաք նկատեալ Գերթողահօրն մերոյ Մովսէսի խորհեցուցն, երգէ զայս շարական 'ի կանոն աւուր Ծննդեան Յիսուսի. «Խորհուրդ մեծ և աքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ, հովիւքն երգեն ընդ հրեշտակսն, տան աւետիս աշխարհի։ Ծնաւ նոր արքայ 'ի բէթղէհէմ քաղաքի, որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ»։

Եւ որովհետև այս աքանչելահրաշ անապօտ լուսոնն շնորհաց Հոգւոյն Ծանօթացան սրբազան աշակերտքն Քրիստոսի, վասն որոյ ասաց նոցա Փրկիչն մեր. «Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան երկնից». ուրեմն յոյժ հեռի և անյարմար է, մանաւանդ շփոթիչ մտաց այն բացատրութիւն, զոր տուեալ է Հեզինակն։

ԲԱՆ ՉՈՐՐՈՐԴ։

Կենարարն մեր Յիսուս Քրիստոս յաղագս փրկագործ և կենարար հաղորդութեան Աստուածահրաշ խորհրդոյն՝ այսպէս ասէր աշակերտացն. «Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ՝ և արիջիք զարիւն նորա, ոչ ունիք զկեանս յանձինս. որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենական և ես յարուցից զնա յաւուրն յետնում. զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է. որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցի, և ես 'ի նմա». Յովհ. Զ. 54—56։

Զայս ահեղ ասելի աստուածաբանական բանից զօրութիւն ներառելով հոգելից վարդապետութեամբ սուրբն Գրիգոր լուսաւորիչն մեր այսպէս քարոզեաց. «Որք 'ի Քրիստոս մկրտեցան ճշմարիտ հաւատով և սուրբ սիրով՝ հաղորդին մարմնոյ և արեան փրկչին, որ գրաւական է փառաց յուսոյ յարութեան, ըստ բանին Տեառն. թէ՝ քանիցս անգամ եթէ ուտիցէք 'ի մարմնոյ իմմէ, և ըմպիցէք յարենէ իմմէ՝ զյիշատակ մահուան իմոյ պատմեսջիք, 'ի դարձ դալստեան իմոյ յերկիր, զի նա է ազատիչ և արդարացուցիչ՝ որով լուծանին մեղք հին մարդոյն և սկիզբն առնուն նորքս, որ ըստ Աստուծոյ հաւատով՝ սուրբ և ճշմարիտ 'ի Քրիստոս Յիսուս». Յաճախ. ճառ ԺԳ։

Եւ երանելի սուրբն Յովհան Ոսկեբերան զբան Արքապան առաքելոյն Պօղոսի, «Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս, և զբաժակս ըմպեցէք, զմահ Տեառն պատմեցէք՝ մինչև եկեսցէ նա». Ա. Կորնթ. ԺԱ. 26, այսպէս բացատրէ թէպէտ համառօտ՝ բայց կարի ազդու. «Քանիցս անգամ, ասէ, թէ առնիցէք զայն, զմահ Տեառն պատմեսջիք զձերոյ փրկութեան՝ և զնոյն բարերարութեան». 'Ի ճառ երկրորդ։

Արդ՝ վկայութիւնքս այսոքիկ յայտնեն մեզ, եթէ փրկա-

բար և կենդանարար խորհուրդն հաղորդութեան է անհրաժեշտ կարևոր հոգւոց մերոց 'ի փրկութիւն և 'ի ժառանգութիւն յաւիտենական անմահ կենդանութեան: Բայց ահա, հակառակ աւետարանական, առաքելական և հայրապետական ճշմարտութեան՝ զինչպէս համարձակեալ է գրել զայս բան շինութիչ մատց Հեղինակն Վարք Քրիստոսի անուանեալ մատենին. թէպէտ և չիցէ, ասէ, խորհուրդն հաղորդութեան անհրաժեշտ հարկաւ կարեւոր ի փրկութիւն, սակայն հարկաւոր է յոյժ ի պահել յանձինս զհոգեւորականն կենդանութիւն: Երես 117. Ծանօթ. 3: Եւ յորմէ արդեօք Աստուածաբանութենէ առնու և անխիղճ և հակառակ սրբոց վարահի այսպիսի անհեթեթ սահմանս տալ:

Քանզի յայս բան մերժել յանդգնի Հեղինակն զայն կրկին խորհրդական աղբիւրս փրկութեան և անմահ կենդանութեան ազգի մարդկան, զոր Փրկիչն մեր անօրինեաց 'ի խաչին բղխեցուցանել 'ի շնորհաբուղխ կողէն իւրմէ որոշ որոշ կրկին վտակս արեան և ջրոյ, ըստ սրբազան աւետարանչին Յովհաննու. «Մի ոմն 'ի զինուորացն սիդաւ խոցեաց զկողն նորա և վաղվաղակի եկ արիւն և ջուր». Յովհ. ԺՁ 34: Այս ինքն՝ եկ արիւն յայտարար հաղորդութեան սրբարար խորհրդոյն, և եկ ջուր որոշակի՝ խորհրդոյն մկրտութեան:

Այսպէս մեկնէ Ներսէս Շնորհալի Սուրբ Հայրապետն միայնութեամբ սուրբ հարց. այսպէս և սուրբն Յովհան Ոսկեբերան 'ի մեկնութեան այնր բանի աւետարանին. «Յերկուց աղբերացն՝ ասէ, որք ելին 'ի կողէն Տեառն, շինեցաւ եկեղեցի. քանզի ջրովն ծնանիմք վերստին աւազանաւն, և արեամբ սնանիմք ճաշակելով զնա»:

Սմին համաձայն և զրիգոր Նիւսացի 'ի բանն, որ վասն թաղման Տեառն, 'ի դիմաց Արեմտեցւոյն Յովսէփայ ասէ: «Շօշափեցից զանարատ զկողս նորա, յորմէ աղբերացաւ արիւն խորհրդական և ջուր վերստին ծննդական»:

Եւ սուրբն Եփրեմ. «Եկ 'ի նմանէ բղխումն ջրոց, զի շինջուսցէ զհուրն Աստուծոյ առաջնոյ և եղեցի լուանալ զծառայու-

թիւն չարութեան նորա, եկ և արիւն ողորմութեամբ, որով գնեաց զմեզ 'ի ծառայութէնէ անտի. և քանզի յարենէ է ամենայն կենդանութիւն, կենդանացոյց զմեզ արեամբն իւրով։

Եւ այլ բազումք 'ի վարդապետաց, ոյք յիշատակեցին զայս բան, 'ի սոյն միտս մեկնեցին՝ զջուրն 'ի մկրտութեան խորհուրդն և զարիւնն 'ի ճաշակման։

Ներհալի Հայրապետին մերոյ վարդապետութիւնն առ այս՝ յայտնի տեսանի 'ի գիրս Ցիսուս որդի և 'ի շարակնոցին. որ խապառ մերժէ զսխալմունս Հեղինակին։

«Ցիգով հարեալ զենաւորին,
Աղբիւր բղխեաց 'ի սուրբ կողին,
Ջուրն 'ի լուացումն աւազանին,
Արիւն յարբումն խորհրդին,
Վասն վերայ կողաձին,
Որով մեռաւ մարդն առաջին»։

Եւ թէ «Քարոզել 'ի աքանչելեաց, Ասուած մարմնով վասն իմ խաչեալ. մերով բնութեամբս մեռանի, Ասուած անմահ խոստովանի. կրկնավասակ կողն աղբերիք եկեղեցի իւր հաստատէ, Ջրովն մաքրի, զարիւն ըմպէ, զՈրդի ընդ Հօր փառաւորէ»։

ԲԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Թագաւորն Թագաւորաց Ցիսուս Քրիստոս ազատ էր յամենայն հարկաց կայսեր և 'ի հարկատուութենէ զեւտական օրինաց. քանզի ո՛չ երբէք գրեալ տեսանի յաւետարանչաց և յառաքելոց, եթէ Ցիսուս Քրիստոս հարկս տայր. բայց միայն գրէ սրբազան աւետարանիչն Մատթէոս զայս ինչ, թէ՝ «Իբրև եկին Նոքա 'ի Կափառնայում. մատեան՝ որք զերկդրամեանն պահանջէին՝ առ Պետրոս և ասեն. վարդապետն ձեր ո՞չ տայ զերկդրամեանն, և ասէ այո՛». Մատթ. ԺԷ. 23։

Կարի չարամտութեամբ էր այս հարցումն նոցա առ Պետրոս. վասն զի ասէ Յովհան Մորձորեցի 'ի մեկնութեան բանից այսոցիկ.

«Քանզի եկին նոքա հարկս խնդրել, որպէս զի պարուրս գտա-
նիցեն 'ի վերայ նորա. որպէս զի թէ ոչ տացէ, ապստամբեալ
զնա յօրինացն ասիցեն, և թէ տացէ, համարիցեն զնա իբրև
զօտար մի: Եւ մինչ Սրբազան առաքեալն Պետրոս ակնածու-
թեամբ մեծաւ ոչ համարձակէր ազգ առնել Տեառն մերոյ ըզ-
հարցումն պահանջողաց երկդամենի, Յիսուս ինքն յառաջեաց
քան զնա իբրև նախաձանօթ իրողութեան, վասնորոյ զնոյն
իբրև դատաւոր կացոյց վասն այնր անիրաւ պահանջմանց..
Եւ իբրև եմուտ 'ի տուն յառաջեաց քան զնա Յիսուս և ա-
սէ. զի՞րդ թուի քեզ, Սի՛մոն, թագաւորք ազգաց յո՞ւմմէ
առնուն զհարկս կամ զհաս, յորդո՞ց իւրեանց. թէ յօտա-
րաց. և իբրև ասաց թէ յօտարաց, ասէ ցնա Յիսուս, ապա ու-
րեմն՝ ազատք են որդիքն. բայց զի մի՝ գայթակղեցուցուք
զնոսա, երթ 'ի ծով, և ընկեա՛ կարթ, և զառաջին ձուկն՝ որ
ելանիցէ՝ առ, և բա՛ց զբերան նորա, և գտանիցես սատեր, և
զայն առեալ տացես ընդ իմ և ընդ քոյ:

Տե՛ս, որպէս բացայայտ նկարագրական մեկնութեամբ շնոր-
հալից բանիւ բացատրէ զաւետարանական բանս Յիսուսի Քրիս-
տոսի փրկչին մերոյ երանելի Վարդապետն. «Թուի թէ և զՊետ-
րոս կազդուրել կամի, թէ՝ չէ՞ ինձ արժան հարկս տալ, որ-
պէս դու իրաւ համարեցար. վասն որոյ և դատաւոր զնա նատոյց.
և զայս հաստատէ ոչ միայն հարցմամբն, այլ և առաջելովն
քան զնորա ասելն և կամ զայլոց ումեք ծանուցանել: Նա
և համարձակութիւն տայ Պետրոսի ասել զանդգաղէր և ամաչէր
յիւրոցն. Զի՞րդ թուի քեզ, թէ թագաւորք ազգաց, ասէ,
յո՞ւմմէ առնուն զհարկս կամ քահանայք զհասն.... Արդ՝
զսոցա կարծիսն խափանեաց հարցմամբ, քանզի զանձնէ եցոյց
թէ՝ չէ օտար: Այլ ազատ է և զնոցանէ առաւել անիրաւու-
թիւն խորհին՝ քան զթագաւորս և զբռնաւորս ազգաց. զի թէ
որպէս ասացեր, նոքա յօտարաց. իսկ ոչ քա՛ յաղքատաց, կա-
րի՞ ինձն անիրաւք են, և որդի՞ եմ ոչ երկրաւոր թագաւորի,

այլ երկնաւորին։ Եւ դարձեալ զի Ղևտացիք էին. որ զհան պահանջէին, եկին փորձել զնա, զի թէպէտ վարդապետ զի՝ տէին, սակայն քահանայ ոչ կարծէին. իսկ Տէրն յայտնապէս ոչ եցոյց զինքն քահանայ զոլ, այլ օրինակաւն ծանոյց. քանզի Ղևտացիք, ոչ տան հարկս, զի ազատք էին. քանզի թագաւորք Եբրայեցւոց զքահանայս ոչ հարկէցուցանէին, այլ ազատ պահէին, ասայ և ինքն ազատս զոլ, որով եցոյց թէ և քահանայ է. . . . ։ Թէպէտ տայ զհարկն, բայց ոչ վայրապար համարեալ է տալ, այլ նախ՝ ցուցանէ, թէ չէ պարտ տալ, և տպա տայ, զի միոքն նոքա չ՚գայթակղեսցին, և միւսով տոքա չ՚մեռանեսցին, զի ոչ իբրև զպարտական տայ, այլ զի զնոցա անմոռութիւն ածցէ յուղղութիւն։ Նաև տալովն զանձատ զօրութիւն ծանոյց, զի ոչ 'ի քսակէ, այլ 'ի ծով է իբրև զամենայնի Աստուած հրամայեաց տալ, որուամ և երբեմն ասատեաց իսկ. . . և ասա 'ի ծով է տայ, և ոչ է փոքր աքանչելիք, յայնպիսի խորոց գձուկն աստերաւն արտաքս ածել. քանզի կրկին և երեկին աքանչելիք է, զի 'ի ծովէ, 'ի ձկանէ, և յառաջին ձկանէ՝ քանզի կարթն մին ըմբռնէ, որ ամենևին զԱստուածական զօրութիւն յայտ առնէ, որ ծովուն և ս հրամայեաց հարկատու լինել և հնազանդ. մի՝ գայթակղեսցուցուք զնոսա այսինքն բամբասել զմէնջ, թէ՝ օրինազանց էին. քանզի յորում տեղւոջ վասն այլոց և վասն հոգ՝ որացն էր բանք, ոչ ինչ փոյթ առնէր գայթակղութեան նոցին, այլ ասէր՝ թո՛յլ տուք՝ կոյրք են կուրաց առաջնորդ. իսկ՝ յորժամ վասն անձին և մարմնական իրաց՝ զգուշանայր յոյժ առ 'ի խրատ մեզ »։

Սմին համաձայն զրէ Շնորհալի Սուրբ Հայրապետն մեր. «Բայց անդրանիկն արարածոց. նոյն անդրանիկն և մեռելոց, պահանջի հարկս 'ի աստղծուածոց, ըստ անդրանկաց Եբրայեցւոց։ Զոր Պետրոսի տալ հրամայէ, ոչ յարծաթոց որ 'ի յերկրէ, այլ արկանել կարթ 'ի ծովու, զսատերն առնուլ 'ի ձկանէ. 'ի Յիսուս Որդի։

Այս Հեղինակն ո՞ր հոգւով զաղատութիւն Քրիստոսի մերժեալ, հակառակ աւետարանական բանի կենարարին մերոյ Յիսուսի գրել ժպրհի, ծանօթութիւն տալով՝ ի վերայ այսր բանի. «Արդարեսն ձեր ո՞չ տայ զերիզրամեանն, և ասէ այո՝». որպէս թէ ցուցանէ Հեղինակն թէ Յիսուս Քրիստոս ամ յամէ տայր զպահանջեալ հարկն. թէպէտ ուսեալ էր, ասէ, զի և ի հեթուն հետէ տայր Քրիստոս զհարկն: Երես 135. Ծան. 4։

Երևի՝ թէ Հեղինակն զայս ծանօթութիւն տալով՝ չէ՛ վերահասու Յիսուսի վրկչին մերոյ էական ազատութեան և ճշմարիտ քահանայապետութեան. մանաւանդ թէ չէ՛ իսկ հասկացեալ յաւետարանական բանից Յիսուսի, որ ո՛չ միայն ինքն է տիրապէս ազատութիւն, այլ և ազատիչ հաւատացելոց. ըստ այնմ, «Եւ ասէր Յիսուս առ Հրէայսն հաւատացեալս. Եթէ դուք կացջիք՝ ի բանի իմում՝ ճշմարիտ աշակերտք իմ էք և ծանիջիք զճշմարտութիւն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ:... Եւ ծառայն ո՛չ յաւիտեան կայ՝ ի տան, իսկ որդին յաւիտեան կայ: Իսկ արդ՝ եթէ որդին զձեզ ազատեցուսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք». Յովհ. Ը. 31. 35. 36:

Եւս և ո՛չ էնկատեալ զՄրբական առաքելոյն Պօղոսի վկայութիւն, որ հաստատէ զճշմարիտ քահանայապետութիւն Քրիստոսի գրելով առ Եբրայեցիսն. «Եւ ո՛չ եթէ ոք՝ անձամբ առնու զպատիւ, այլ կոչեցեալն յԱստուծոյ, որպէս և Ահարոնն: Նոյնպէս և Քրիստոս ո՛չ եթէ անձին շուք եդ լինել քահանայապետ, այլ որ խօսեցաւն առ նա. թէ որդի եմ՝ ես դու և ես այսօր ծնայ զքեզ՝ որպէս և՝ ի միւսումն ասէր՝ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի». Եբր. Բ. 4: Անշրջանկատ դատութիւն Հեղինակին, տե՛ս, յո՞ր զառանցանս առեալ ձգէ զնա:

«Ո՛չ երբէք արժան է, ասէ բարոյական առաձն իմաստասիրաց, վստահիլ՝ ի դատաստան իւրոյին մտաց, և առաւել յորժամ քո բանդ կամ ճշմարտութիւն բուն դատին ընդ խնդ-

բով անկանիցի։ Ո՛չ ոք է այնչափ կորովամիտ կամ պայծառ և անապօտ 'ի դատման, մինչև չ'կարէր սխալել։ Լաւ ևս տեսանեն աչք քան զական։ Եւ ո՛չ իսկ 'ի գիտնաւորութենէ և 'ի հանճարոյ օրէն է միշտ առնուլ զհամարձակութիւն. ապաքէն և պարտիզպանն խօսի երբեմն բան արժանաւոր». Տար. առաջ. 451։

ԲԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ.

Ողջամիտ մեկնիչք կամ բացատրողք Քրիստոսի սրբոյ աւետարանին կարի զգուշացեալ են նախ զնկարագրականն նկատել, և ապա ըստ պահանջման բանիցն տալ զկորհրդական կամ զբարոյական և կամ զայլաբանական մեկնութիւնս։

Գրեալ է 'ի սուրբ աւետարանի անդ. «Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յիսուս և ասեն. ո՞վ իցէ 'ի մէնջ մեծ յարքայութեան երկնից։ Եւ կոչեաց Յիսուս առ ինքն զմանուկ մի, կացոյց զնա 'ի մէջ նոցա։ Եւ ասէ, ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ո՛չ դարձջիք և եղ'ջիք իբրև զմանկտիս, ոչ կարէք մտանել յարքայութիւն երկնից։ Արդ՝ որ խոնարհեցուցանէ զանձն իբրև զմանուկս զայս, նա է մեծ յարքայութեան երկնից». Մատթ. ԺԸ. 1—5։ Մարկ. Թ. 33. 34։ Ղուկ. Թ. 46. 47։ Այս բանք ունին միայն նկարագրական և բարոյական մեկնութիւնս և բացայայտ ծանօթութիւնս, որպէս ապացուցանեն սրբազան մեկնիչքն։

Գրէ Երանելի Յովհան Ծործորեցի. «Ո՛չ բանիւ միայն կամի զգաստացուցանել, այլ և օրինակաւն թախանձեցուցանել. դուք, ասէ, զայն քննէք, թէ ո՞վ մեծ իցէ, և վասն զահերէցութեանն հակառակիք։ Բայց ես զձշմարիտն ասեմ ձեզ, թէ ո՛չ քան զամենեսեան խոնարհագոյն լինիջիք, և ո՛չ զդրուն արքայութեան արժանի լինիք տեսանել։ Եւ յիրաւի զմանուկն

'ի մէջ կացուցանէ, զի 'ի տեսլենէ երևացն պատկառեցուցանէ և առ բնութեանն ուղղութիւն ածէ, և զեկամուտ չարութիւն արտաքս հանէ, և զհաւասարութիւն սիրել առ ամենեսեան, մինչև առ նուաստս, զի այնպիսի են մանկունք, և ցուցանէ թէ և յօժարութեամբ զայս առնել կարողութիւն է։ Բայց մի ոք տարակուսեսցի, թէ որ Ծերն էր՝ զինա՞լոյ դարձցի և իբրև զմանուկ լինիցի, որպէս Եփիոդիմոս կարծեաց. այլ զի զվարս և զբարս մանկանն զգենուցու՝ թէպէտ կատարեալ այր էր, որ է կրկին առաքինութիւն զայնպիսի վարս ունել, և չ'հպարտանալ. քանզի մանուկն խոնարհ է և անմեղ, 'ի նախանձուէ սուրբ. 'ի ցանկութեանց ազատ, միամիտ և պարզաբարոյ, զի թէպէտ թշնամանիցի՝ ո՛չ տրտմի, և եթէ մեծարիցի՝ ո՛չ վրդովեսցի։ Արդ՝ որ այսպէս յամենայն արատոյ ազատ լինիցին՝ յիրաւի վարքայութիւն երկնից ժառանգեն . . .։ Զանազանութիւն գնէ խոնարհութեան և խոնարհեցուցչութեան. քանզի ո՛չ մի և նոյն խոնարհ լինիլ և կամ յայլմէ խոնարհիլ, քանզի՝ որ զինքն խոնարհեցուցանէ, կամաւորութեամբ է այնպիսին, ասէ, բարձրացի, և մեծ կոչեսցի. իսկ որ յայլմէ խոնարհի և տառապի կամ 'ի նեխտառանաց ուրուք, այսքիկ ո՛չ խոնարհութիւն, այլ 'ի հարկէ հնազանդութիւնք. իսկ Տէրն զյօժարութեամ'ն պահանջէ, որպէս զինքն կամաւորութեամբ խոնարհեցաւ. վասն որոյ ասէր թէ փոքրիկն մեծ է յարքայութեան երկնից։ 'ի Մեկն. Մատթ. ԺԸ. 1։

Յայս միտս զրէ և Բարսեղ ձոն. «Ըստ որում, ասէ, եթէ ո՛չ դարձջիք և լինիջիք իբր զմանկտի, ո՛չ մտանիցէք յարքայութիւն երկնից. և յիրաւի իսկ զմանուկն 'ի մէջ կացուցանէ. և յորդորէ լինել այսպիսի սուրբ և անմեղ, զի 'ի նախանձուէ սուրբ է մանուկն և 'ի փառասիրութենէ . . . թէպէտ և թշնամանիցես և թէ պատուեցես և մեծարեսցես՝ ո՛չ տրտմի ընդ նմին և ո՛չ ընդ միւսն հպարտանայ։ Եւ վասն այսորիկ առեալ մանուկ մի կայոյց 'ի մէջ նոցա. զի զօրինակ զամենայն

վարդապետութիւնս իւր հակառակ մարդկային խորհրդոց ա-
բար, զի ասաց որք լան և ծիծաղեսցին, և որք սգան՝ մխի-
թարեսցին. և որ կորուսանէ զանձն իւր վասն իմ, գտցէ զնա։
Նոյնպէս և ասա ընդդէմ կարծեաց առաքելոյն, զի նոքա հա-
մարէին թէ մեծամեծք լինելոց էին մեծ. ետ պատասխանի,
եթէ փոքունքն ոչ կամին». 'Ի Մեկն. Մարկ։

Նոյնպէս և երջանիկ սուրբ վարդապետն մեր Խրնաոխոս
գրէ 'ի մեկնութեան Ղուկասու ԺԵ. 46. «Ինքին ժամու սկսան
խորհիլ աշակերտքն թէ ով 'ի նոցանէ ունի զառաջին պատիւն,
այլ Տէրն ուսուցանէ զնոսա զվերջինն ընտրել տեղի խոնարհու-
թեան, զի այն է պատճառ ստոյգ բարձրութեան։ Անմեղ լի-
նել յամենայն չարեաց, ի՞րև զտղայ, որ ո՛չ է ընդունակ չա-
րեաց, զի այնպէս ունիցին զնա յինքեանս բնակեցուցանել և
զՀայր նորա»։

Բանք Յիսուսի Քրիստոսի և աշակերտաց նորին հային վասն
արքայութեան երկնից, և ո՛չ վասն թագաւորութեան երի՛ր։
Եւ խորհուրդ մտաց աշակերտաց էր այս, եթէ ով որք ունիցի
'ի միջի նոցա զկոչումն և զհամարումն մեծութեան յաւիտե-
նական փառաց երկնից արքայութեան։ Բայց դու տես ստոյ-
նոր զծանօթութիւն Հեղինակին. Կարծէին աշակերտքն, ասէ, եթէ յա-
յարութեանն իւրոյ կանգնեսցէ զթագաւորութիւնն Իսրայէլի, նմին իրի եւ անդ-
ամն բարձնուիրք լինէին։ Երես 137. Ծան. ։

Եւ յո՞ր հիմունս հաստատեալ է այսպիսի անտեղի ստեղ-
ծաբանութիւն, որ ո՛չ երբէք կարէ գտանել տեղի ո՛չ 'ի բանս
սրբազան աւետարանչաց և ո՛չ 'ի բանս սուրբ առաքելոց և
հոգեշնորհ մեկնչաց։ Քանզի Յովհան Ոսկեբերան 'ի վերայ այսր
բանի սրբազան առաքելոյն Պօղոսի թէ՝ «Հաւատով՛ գնամք
և ո՛չ կարծեօք». Բ. Կորնթ. Ե. 7, «Պարզմտութեամբ և հա-
ւատով գնացին. ասէ, զհետ Յիսուսի աշակերտքն և ունկնդիր
լինէին երկիւղածութեամբ աւետարանական երանաւէտ վար-
դապետութեան Յիսուսի»։

Ասպա զգուշանալ արժան է և յայսմ հելքելի բանից, որք շփոթեն զմիտս մեր, և հեռելիլ միշտ լուսաւոր բանից աւետարանական ճշմարտութեան և առաքելական անհելքելի աւանդութեանց և սրբազան Հարց հոգեբուղխ վարդապետութեանց։

ԲԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Յիսուս Քրիստոս 'ի հրաշալի մարդեղութեան իւրում ո՛չ միայն անօրինեաց զաքանչելահրաշ փրկութիւն ազգի մարդկան 'ի յաւիտենական դատապարտութենէ սկզբնական մեղաց, այլ և կամեցաւ ձրիապարգև շնորհիւ իւրով հաղորդակից առնել զմեզ իւր Աստուածային սքանչելի լուսոյն, որով և մեք լուսազարդեալ 'ի հոգի, արժանացաք անուանիլ որդիք լուսոյ· ուստի և աւետարանեաց յայտնի Աստուածային բանիւն իւրով· «Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէ՛ք 'ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք»· Ա· Յովհ· ԺԲ· 36։

Յայս միտս գրէ առաքեալն Յովհաննէս· «Եւ այս են աւետիքն՝ զոր լուաք առ 'ի նմանէ և պատմեմք ձեզ, զի Աստուած լոյս է և խաւար 'ի նմա չկայ և ո՛չ մի· եթէ ասիցեմք եթէ հաղորդութիւն ունիմք ընդ նմա, և 'ի խաւարի շրջիցիմք, ստեմք և ո՛չ առնեմք զճշմարտութիւն»· Ա· Յովհ· Ա· 5· 6։

'Ի բացատրութիւն այսր հոգեբուղխ բանից Եւանգելոյն Յովհաննու Շնորհալի սուրբ վարդապետն մեր Սարգիս ասէ· «Լոյս ասէ զգործս լուսոյ և իբրև ծանապարհ իմն ցուցանէ զմատուն առաքինութեանցն, վասն զի գնացք են յառաքինութենէ յառաքինութիւնս, որպէս Դաւիթ ասէ։ Եւ արդ՝ ո՛րպիսի ինչ են գնացք լուսոյ, այն է զոր Տ՛ըն ասաց· Գնացէ՛ք մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք, զի մի՝ խաւար ձեզ հասցէ···։ Ո՛րպիսի ինչ հաղորդութիւն լցէ, որպէս նա ճշմարտութեամբն իւրով հաղորդէ ճշմարտին Հօր· Եւ մեք մերով ճշմարտութեամբս

հաղորդ գտանիցիմք նորա ճշմարտութեան։ Եւ որպէս նա 'ի Հօրէն լուսոյ՝ լոյս, նմանապէս և մեք 'ի նմանէ՝ լոյսք, և զոր օրինակ նորայն որ ինչ լաւ բնութեան ունի, 'ի Հօրէ է, այնպէս և մերն ամենայն 'ի նմանէ է». 'ի Մեկն. Ա. Յովհ. Ա։

Զայս քարոզէ և Սրբազան առաքեալն Պօղոս առ Թեսաղոնիկեցիս. «Այլ դուք ե՛ղբարք, ո՛չ էք 'ի խաւարի, թէ օրն ձեր իբրև զգող 'ի վերայ հասանիցէ. զի ամենեքին դուք որդիք լուսոյ էք, և որդիք տունջեան. չեմք գիշերոյ. չեմք խաւարի». Ա. Թես. Ե. 4. 5։

Քաջայայտ է յաւետարանական և յառաքելական վկայութեանց, զի ամենայն ուղղափառ քրիստոնեայք ունին զլոյս քրիստոնէական կոչման և անճառելի լուսով աւետարանին պայծառացեալք են, և հոգևոր ծննդեամբ սրբարար խորհրդոյն մկրտութեան և շնորհաշրջիմ կնքով սուրբ Հոգւոյն Աստուծոյ վիճակեալ գտանին 'ի ժառանգական որդեգրութիւն Հօրն երկնաւորի, որ է լոյս անեղական, և անուանին որդիք տունջեան և որդիք լուսոյ։ Իսկ հեռացեալքն 'ի լուսոյ աւետարանական ճշմարտութեան և 'ի լուսոյ քրիստոնէական շնորհաց, և զբաղկեալքն յորդեգրութենէ Հօրն Աստուծոյ մոլորամիտ անհաւատքն և կամակոր խաւարասէրքն՝ որդիք աշխարհի անուանին. վասն որոյ Տէրն մեր ասաց զառակ Տնաեսին. «Որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց». Ղուկ. ԺԶ. 8։

Տե՛ս դու այժմ, զի՞նչ սայ ծանօթութիւն 'ի վերայ բանիս այսորիկ Հեղինակն ամենայնիւ հակառակ աւետարանական և առաքելական ճշմարտութեան, գրելով այսպէս. Որդիս լուսոյ դիրեալն ասէ, ասղտանելով զնոսա, զի ո՛չ զգուշանան յաղէտից որ պատրաստեալ են նոցա. իսկ որդիս աշխարհի զայնոսիկ անուանէ, որ բոլորովիմբ զառաձեալք իցեն ի հոգս մարմնաւոր պիտոյից. Երես 192. ծանօթ. 2։

Եթէ անուանէր Հեղինակն զհրեշտակս որդիս լուսոյ, ըստ որում՝ են հոգեղէն և պարզ էակ. ո՛չ այնքան սխալէր 'ի բա-

ցաւորութեան անդ, մանաւանդ զի ունէր հետևիլ Ներսիսի Շնորհալւոյն որ 'ի շարականոցին գրէ. «Որ 'ի լուսոյ լոյսն ներ-գործեալ զլմանալեաց գոյականս. 'ի Կանոնն Հրեշտակապետաց: Ուստի երևի՝ զի չէ ընթերցեալ սորա զմեկնութիւն Ղուկասու զարարեալն սուրբ վարդապետին մերոյ Իգնատիոսի, որ 'ի Մեկնութեան այնր բանի գրէ. ԺԶ. 8. «Արդ որդիս լուսոյ անուանէ զՀրեշտակս վասն պարզ և անախտ բնութեանց նոցա»:

Ուրեմն՝ ողջամիտ հաւատով ասասնօր պարտ է մեզ ուշադիր լինել հոգեշահ և բարոյական խրատուց Սրբազան առաքելոյն Պօղոսի առ Տիմոթէոս աշակերտն իւր. «Զգո՛յշ լինիջիր անձին և վարդապետութեանդ և 'ի դմին յամեսջի՛ր, զայդ եթէ առնիցես և զանձն ապրեցուցես և զայնոսիկ՝ որք քեզն լսիցեն». Ա. Տիմ. Դ. 16:

ԲԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ:

Փրկիչն մեր՝ զոր ինչ Աստուածային բանիւն վարդապետէր 'ի փրկութիւն հոգւոց մերոց և 'ի ժառանգութիւն յաւիտենական փառաց երկնից արքայութեան, զնոյն և գործով իւրով յինքեան ցուցանէր: Ուստի և սրբազան աւետարանիչն Ղուկաս 'ի սկիզբն բանի գործոց առաքելոց գրէ. «Զբանն առաջին զոր արարի վասն ամենայնի ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել»: Ա. 1:

Տե՛ս, նախ բանիւ աւետարանեաց զերանաւէտս և զբարձրաշնորհ առաքինութիւն հեզութեան և խոնարհութեան, ըստ այնմ՝ «Երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր». Մատթ. Ե. 5, և ապա զնոյն աքանչելի հեզութիւն և խոնարհութիւն յինքեան յարացոյց տալով ասէ. «Ուսարո՛ւք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ». Անդ. ԺԱ. 29:

Սոյնպէս նախ վարդապետ աշակերտացն զխոնարհութիւն հրամայելով. «Որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել, եղիցի ձեզ պաշտօնեայ, և որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել, եղիցի ամենեցուն ծառայ. և ապա զիւր փրկարար խոնարհութեան յայտնէ զտեսութիւն յասելն. «Քանզի և որդի մարդոյ ո՛չ եկն առնուլ պաշտօն, այլ պաշտել և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց». Մարկ. Ժ. 45:

Ըստ այնմ օրինակի և յորժամ դասք առաքելոց խորհէին հակառակ խոնարհութեան ՝ թէ ո՞ 'ի միջի իւրեանց համարեցի մեծ, ցիսուս նախ՝ բանիւ վարդապետաց նոցա հրամայելով. «Որ մեծն է 'ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն՝ և առաջնորդն իբրև զսպասաւոր: Ո՞վ է մեծ, բազմեալն թէ սպասաւորն, ո՞չ սպաքէն բազմեալն, բայց ես եմ 'ի միջի ձերում իբրև սպասաւոր». Ղուկ. ԻԲ. 24—27:

Սպաքէն զայս սքանչելի խոնարհութեան կատարելութիւն հանդիսացոյց Տէրն մեր 'ի վերնատան անդ յեւ խորհրդական ընթրեացն, ուր իբրև զսպասաւոր ծայրագոյն խոնարհութեամբ և անսահման հեզութեամբ սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, որով օրինակ գերօրինակ եցոյց յինքեան 'ի կրթութիւն կատարեալ հեզութեան և խոնարհութեան մերոյ: վասն որոյ Ներսէս Շնորհալի սուրբ Հայրապետն մեր յերգս շարականի հրաշալի ինն ատտուածաբանէ ասելով. «Դասուց իւրոց աշակերտաց՝ զոր նախ բանիւ վարդապետաց. այսօր գործով զծայրագոյն եցոյց յինքեան զխոնարհութիւն. սպասաւորեալ հողեղինաց, այն որ անտեսն էր հրեղինաց. տարեալ պաշտօն իւր ծառայից այն որ պաշտին 'ի սրովբէից: Եթէ տէրս ասէ էից և վարդապետս բոլորից, զաշակերտացդ և զծառայից զոտս լուացի 'ի հնոյ ապտից, միմեանց և դուք համարեցուք՝ ցուցէք զնոյն խոնարհութիւն, բարձրացելոյն 'ի կործանումն և անկելոյ բնութեանդ կանգնումն:

Ո՛չ յայտնէ Շնորհալին, եթէ գորս՞ յաշակերտաց անտի

նախ լուայ զոտս, վասն զի գիտէր, զի երանելի սուրբ Հայրապետն Ոսկեբերան գրեալ է զայսմանէ յաղօթամատոյց ճառի իւրում՝ 'ի խորհուրդ ոտնալուայի յաւուր մեծի հինգշաբաթի. «Յերեկոյ հասեալ ժամու աւուրն երկոտասանիցն, խոնարհութիւն ուսուցանելով՝ զՅուդային յառաջ լուանայր զոտս, որ աշխատեցաւ մինչև ցգաւիթ քահանայապետին, որ և 'ի միտս իւր ասէր. բիւր անգամ մեծարիցես զիս, ոչ եմ մոռանալոյ զերեսուն արծաթսն». Յաղօթս Յովհ. Ոսկեբ. ասացեալ վասն ժողովրդեան և քահանայից:

Ոսկեբերան զայս բան գրելով՝ յայտնի ցուցանէ ըստ աւետարանչին Յովհաննու թէ՝ ոչ 'ի Պետրոսէ սկսեալ է զլուացումն ոտից, այլ յանարգ աշակերտէն, այս է 'ի Յուդայէ խակարխամացոյ, 'ի դարձ և 'ի զգուշութիւն յարծաթասիրութեանն խորհրդոց: Քան զի ըստ աւետարանչին. «Յառնէ յընթրեաց անտի, և դնէ զհանդերձսն, առեալ զդենջակ մի սփածաւ: Եւ ապա առեալ ջուր արկ 'ի կոնք և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, և սրբէր զենճակաւն զոր սփածեալ էր: Գայ առ Սիմոն Պետրոս, և նա ասէ Տէր՝ դու զիմ զո՞տս լուանաս, պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ, զոր ես գործեմ, դու այժմ ոչ գիտես, բայց ապա գիտասցիր». Յովհ. ԺԳ. 4—7:

Ապա ուրեմն Հեղինակն իբրև նպաստ ինքեան առեալ զկարծիքսկան բան Օգոստինոսի՝ անհամաձայն գրութեան աւետարանին Յովհաննու գրէ. Ոմանց այնպէս թուեցաւ թէ նախ զոյցոց առաքելոցն՝ մանաւանդ թէ զՅուդայի ոտն լուայ Քրիստոս, եւ ապա առ Պետրոս եկն. բայց հաւանելիք եւս են կարծիք Աստուածայնոյն Օգոստինեայ՝ որ 'ի Պետրոսէ համարի սկիզբն արարեալ Տեառն լուացմանն, զի նա զլուխ էր այլոցն, եւ նմա պարտ էր՝ ասէ՝ առաջին լինել 'ի տալ հաւատացելոց զօրինակ խոնարհութեան եւ զսիրոյ: Երես 258. ծան. 3:

Աստանօր երևի, թէ Հեղինակն ոչ ուշադիր եղեալ է սուրբ աւետարանին, և ոչ իսկ ընթերցեալ զվերոյիշեալ ճառն սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի և զմեկնութիւն Յովհաննու աւետա-

բանչին զարարեալն 'ի Նանայ վարդապետէն Անուոյ, որ գրէ. «Գայ առ Սիմոն Պետրոս, և նա ասէ ցնա Տէ՛ր, դու զիմ զո՞տս լուանաս, թուի մեզ նախ զՅուդայինն լուանալ. և ապա կարգաւ իմն գայ առ նա. զի այն խոնարհութեան էր օրինակ՝ մեծագունին մի՛ խանդալ ընդ փոքրագունին պատիւ. իսկ ասելն պետրոսի, Տէ՛ր, դու զիմ զո՞տս լուանաս այսինքն թէ՝ դու որ զբորոտս սրբեցեր, և զկոյրս լուսաւորեցեր, և զմեռեալս յարուցեր, և զայլ ևս անթիւ նշանագործութիւնսն, դու զի՞մ զոտս լուանաս»:

Յայս միտս գրէ և Սոեփանոս վարդապետն Ագոնց 'ի տեսութեան նոր կտակարանին յաղագս լուանալոյ Յիսուսի զոտսն Յուդայի. «Պարտ էր, ասէ, անօրինին յառաջ քան զտալ զոտս 'ի լուացումն, բանալ զսիրտն զղջմամբ, բայց ո՛չ արար. ընկալաւ հաւատարապէս ըստ այլոց զպատիւ խոնարհ ապաստարութեան Տեառն մերոյ, և ո՛չ մեղմացաւ 'ի չարեացն, եռեսաւ ոտս իւր զերկնաւոր վարդապետն պատրաստ 'ի լուանալ զնա յաղտեղութենէ հոգւոյ, ետ զաղտեղի ոտսն յայն Աստուածային ձեռս, յորմէ տեսեալ էր պարգևիլ կուրաց տեսութիւն, հիւանդաց առողջութիւն, մեղաւորաց արձակումն 'ի մեղաց, այսահարաց ազատումն յայսոց չարաց. այլ մատնիչն յամառեալ 'ի տալն զոտսն՝ ո՛չ ետ զսիրտն, ո՛չ կամեցաւ ո՛չ լոյս մտաց, ո՛չ սրբութիւն հոգւոց, այլ գնաց ամենայնիւ զհետ թելադրութեան այսոյն իւրոյ չարի»:

ԲԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ:

Հաւատամք 'ի յարութիւն մեռելոց՝ արդարոց և մեղաւորաց և 'ի յանդիման լինիլ ամենեցուն առաջի ահեղատեանին Յիսուսի Քրիստոսի. ըստ այնմ. «Այլ արդ՝ Յիսուս Քրիստոս յարուցեալ է 'ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց,

քանզի մարդով եղև մահ... որպէս Ադամաւն ամենեքին մեռանին՝ նոյնպէս Քրիստոսիւն ամենեքեան կենդանացին, իւրաքանչիւր յիւրում կարգի». Ա. Կորն. ԺԵ. 20. 23։

«Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինիլ կայ առաջի աստենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր իւրով [մարմնով. զոր ինչ գործեաց յառաջն, եթէ բարի և եթէ չար». Բ Կորնթ. Ե. 10։

Յարութիւն մեռելոց արդեօք զօրութեամբ որոյ ունի կատարիլ, և որոյ հրամանի ներգործութեամբ լինի։ Մեք հաւատամք եթէ Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ հրամանաւն, որ ինքնին աւետարանեաց մեզ. «Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ և Որդւոյ ունիլ կեանս անձին իւրում։ և իշխանութիւն ետ նմա դատաստան առնել, և զի Որդի մարդոյ է՝ ընդ այն զի զարմանայք, զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին, որք 'ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա և եկեսցեն արտաքս, որոց զբարիս գործեալ իցէ՝ 'ի յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ իցէ՝ 'ի յարութիւն դատաստանաց»։ Յոհվ. Ե. 26— 29։

Զայս աներկբայելի և ամենակարող զօրութեան իւրոյ օրինակ հրաշափառապէս եցոյց մասնաւոր իմն ներգործութեամբ ի յարութեանն Ղազարու. որպէս և գրեալ է. «'Ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ Ղազարէ, արի՛ ելա՛ արտաքս». Անդ. ԺԱ. 43։

Եցոյց 'ի նշան ընդհանուր յարութեան մեռելոց և 'ի գողգոթայ 'ի վերայ փրկարար խաչին իւրոյ. «Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց 'ի ձայն մեծ և արձակեաց զոգին։ Եւ ահա վարագոյր տաճարին ցեղաւ յերկուս 'ի վերուստ մինչև 'ի վայր, և երկիր շարժեցաւ, և վէմք պատառեցան։ Եւ գերեզմանք բացան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան». Մատթ. ԻԷ. 50— 52։

Եթէ 'ի մահուն անմահ արարչին մերոյ և փրկչին Յիսուսի գերեզմանք բացան, և բազում մարմինք սրբոց յարեան՝ մինչ էր նա 'ի խաչին, ապա զի՞արդ հակառակ աւետարանական ճըշ-

մարտաց թեան ծանօթութիւն տայ Հեղինեակն գրելով այսպէս։ Բանալ՞ գերեզմանաց արդարոցն եւ յառնել նոցա եղեւ յաւուր երրորդի, այլ աւետարք Ինչն զամենայն աքանչելիսն կանխէ ի մի վայր ածել։ Երես 301. ծան 1։

Սրժան էր Հեղինեակին հետեւել Հոդերուղիս վարդապետութեանց Հայրապետին մերոյ Ներսէսի Շնորհալւոյ, որ գրէ։

«Որ ահագին գոչման ձայնին,
Բարբառելով զէլի էլին,
Հիմունք երկրի տատանէին,
Լերինք բարձունք տատանէին։
Եւ վարագոյր հին օրինին
Վերուստ'ի վայր պատառէին,
Եւ գերեզմանք բանային,
Մարմինք սրբոցն յառնէին։
Արեգական լոյս քողարկեալ
Խաւարանայր միջօրէին,
Նաև լուսին օրինակին
Փոփոխելով յարեան գունին։
Քանզի զՏէրն իւրեանց տեսին
Մերկ'ի խաչին Հանդուրժէին,
Որ փոխանակ բանականին
Անբան տարերքն սարսէին»։

'Ի Յիսուս Որդի։

Եւ Սուրբ երանելի վարդապետն մեր Յովհան Ծործորեցի գրէ'ի մեկնութեան աւետարանին Մատթէոսի'ի նշան հաստատուն յարութեան և'ի հաւատարմութիւն հանդերձելոյ հասարակաց նորոգութեան. ըստ այնմ, «Հացից զգերեզմանս ձեր. և Հանից զձեզ'ի գերեզմանաց ձերոց ժողովուրդ իմ, բայց ո՛չ ամենեքեան, այլ միայն մարմինք սրբոցն, որք նախ քան զգալուստն նորա խորհրդոյ նորին մաքրեալ արդարացան, որոց բաղձանքն յաւետարանն պատմի թէ. բազումք արդարք ցանկա-

ցան տեսանել ... վասն էր արդեօք յետ յարութեան նորա մտին Յերուսաղէմ, և ոչ առժամայն, քանզի պարտ էր նախ անդ-րանկին 'ի մեռելոց բազմաց երևել, և ապա այլոցն՝ որ եղեն կերպարանակից մահու և յարութեան նորա»: Ըստ այնմ և Սուրբն Աթանաս գրէ. «Զի եթէ 'ի խաչին զոլով զյառաջագոյն արբոց մարմին մեռեալս յարոյց, որչա՞փ ևս առաւել կարող էր յարուցանել զոր զդեցաւ մարմին». 'ի թուղթն առ Անտիոքոս:

Ապա ուրեմն Հեղինակն եթէ ոչ կարէր հաստատել զծանօթութիւնս իւր. կարող էր ըստ ողջամիտ աւետարանական վարդապետութեան արբոց Հարցն ասել, թէ յարուցեալք միանգամայն ոչ մտին Յերուսաղէմ, այլ զկնի ինքնազօր յարութեան Յիսուսի Քրիստոսի. որպէս Լուսաւորիչ Հայրն մեր Սուրբն Գրիգոր գրէ. «Տեսեալ զքանչելիսն նոյնպէս և պահապանացն և որտաբեկ ոգեսպառ 'ի քաղաքն անկեալ. պատմելով քահանայիցն և աշակերտելոցն եղելոց, մանաւանդ ամբոխելոցն նեղելոց և զրդուելոցն 'ի քաղաքն երևելով բազմաց, որով եկեալ 'ի վախճան և խոստացեալ բան մարգարէին, թէ բացից զգերեզմանս ձեր. ասէ Տ!ր և հանից զձեզ 'ի գերեզմանաց ձերոց, դարձեալ Եսայի ասէ՝ յարիցեն մեռեալք և կանգնեսցին որք իցեն 'ի գերեզմանս, զի ցողդ՝ որ 'ի քէն է բժշկութիւն է նոցա, թերևս վասն կենդանարար Արեանն Քրիստոսի նշանակեաց, որ 'ի վերայ խաչին հեղաւ զամենեքումբք: Եւ զի յայտ արասցէ՝ թէ անդ մարգարէացաւ զնոսին Աստուած 'ի դէմս աշակերտացն. գնա՛ ժողովուրդ իմ, մո՛ւտ 'ի շտեմարանս քո, փակեա՛ զդրունս քո և թաքի՛ր առ ժամանակ մի, իսկ կամակար ազգին խաչահանուացն խլացելոցն, և կուրացելոցն 'ի ճշմարտութենէն ոչինչ գործեաց, ոչ պատմութիւն կենդանեաց, և ոչ երևումն մեռելոցն, և ոչ ահաւորութիւնն ընշանացն Աստուածայաղթ յարութեան: Քանզի վասն նոցա առաքեաց զլինելոցն իրս, տակս մեծատանն թելադրեաց թէ Մովսէսի և թէ մարգարէիցն ոչ լուիցեն, և ապա թէ և 'ի մեռելոց ոք երթայ առ նոսա ոչ լսեն. Ագաթ. Տիպ Կ. պօլսայ. երես 171:

ԲԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ

'Ի Սուրբ աւետարանական բանից հաւատալ գիտեմք, զի Սրբազան առաքեալքն նախ քան զյարութիւն Փրկչին մերոյ և զընդունիլ յինքեանս զբազմապատիկ շնորհս զօրութեան Սուրբ Հոգւոյն՝ կալի երկչոտք էին, ուստի և Յիսուս յարութիւն և ի քաջասրտութիւն քաջալերեալ յորդորէր զնոսա ասելով. «'Ո՛չ է աշակերտ առաւել քան զվարդապետ, և ո՛չ ծառայ քան զտէր իւր։ Շատ իցէ աշակերտին՝ եթէ եղիցի իբրև զվարդապետ իւր. և ծառային՝ իբրև զՏէր իւր։ Եթէ զտանուտէրն բեհեղզէբուղ կոչեցին. ո՞րչափ ևս առաւել զընտանիս նորա։ Մի՛ այսուհետև երկնչիցիք 'ի նոցանէ... որ սպանանեն զմարմին և զոգի ո՛չ կարեն սպանանել». Մատթ. Ժ. 24— 28։

«Եւ ասէ ցնոսա, ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք, չևևս ունիք հաւատս, և երկեան յերկիւղ մեծ». Մարկ. Դ. 40։ Ղուկ. ԺԲ. 5. 6։

Ո՞չ սպասէին յայս երկիւղ պաշարեալ առաքելոցն 'ի մատնութեան ահեղ գիշերին թողին միայնակ զամենասիրելի վարդապետն իւրեանց 'ի մէջ չարաժողով ամբոխին և ինքեանք փախեան. ըստ այնմ, «Յայնժամ աշակերտքն ամենեքեան թողին զնա և փախեան». Մատթ. ԻՁ. 56։ Մարկ. ԺԴ. 50։

Այսու մարդկային երկիւղիւ զգածեալ առաքելոցն Պետրոսի երիցս անգամ նզովիւք և երդմամբ ուրացաւ զՏէրն 'ի գիշերի կամաւոր և փրկարար չարչարանացն. «Իսկ Պետրոս նըստէր արտաքոյ 'ի գաւթին. մատեաւ առ նա աղախին մի և ասէ, և դու ընդ Յիսուսի Գալիլեացւոյ էիր, նա ուրացաւ առաջի ամենեցուն և ասէ թէ ո՛չ գիտեմ զինչ խօսիպ։ Եւ իբրև ել նա արտաքս՝ քան զդուռնն՝ ետես զնա այլ կին մի, և ասէ ցայնոսիկ՝ որ անդն կային, և սա ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էր։ Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ թէ ո՛չ գիտեմ

զայրն։ Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ որք կային անդ, ասեն ցՊետրոս. Արդարև՝ և դու 'ի նոցանէ ես. քանզի և խօսք քո յայտ առնեն զքեզ». Մատթ. ԻԶ. 69 — 73։ Մարկ. ԺԹ. 68—70։ Ղուկ. ԻԲ. 57։ Յովհ. ԺԸ. 25։

Իսկ զկնի հրաշափառ յարութեան Փրկչին մերոյ՝ մինչ 'ի վերնատան անդ դրօքն փակելովք ժողովեալ էին աշակերտքն առ ահին հրէից, եկն Յիսուս և եկաց 'ի միջի նոցա և Աստուածային շնորհաբուղխ բերանովն փչելով 'ի նոսա ասաց. Առէք զՀոգին սուրբ. որպէս գրէ սրբազան աւետարանիչն Յովհաննէս. «Եւ էր երեկոյ 'ի միաշաբաթուոջ աւուրն, և դրովք փակելովք, ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին հրէից, եկն Յիսուս և եկաց 'ի միջի նոցա և ասէ ցնոսա, ողջոյն ընդ ձեզ։ Իրրև զայս ասաց. նոցայց նոցա զձեռսն զկողս իւր, և խնդացին աշակերտքն իրրև տեսին զՏէր։ Ասէ ցնոսա դարձեալ ողջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս Հայրն իմ՝, և ես առաքեմ զձեզ։ Եւ զայս իրրև ասաց փչեաց 'ի նոսա, և ասէ առէք Հոգին սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա, եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի». Յովհ. Ի. 19 — 23։

'Ի վերոյ այսր շնորհալի փչմանն Յիսուսի Քրիստոսի 'ի զաս սրբազան առաքելոց խորհրդաւոր վարդապետութեամբ մեկնաբանելով գրէ երանելի վարդապետն Աստուծոյ Նանայ՝ 'ի մեկնութեան աւետարանին Յովհաննու. «Վասն այսորիկ փըշեաց 'ի նոսա, ցուցանելով նոցա, եթէ 'ի ձեռն անդր փչման զօրացեալ կարող լինիցիք կրել՝ յորոց այժմ անյուսացեալքդ էք վասն անձանց տկարութեան. այլ թէ ընդէ՞ր ո՛չ ասաց, ընկալարո՛ք զՀ զի սուրբ, այլ նախ՝ փչեաց 'ի նոսա, ապա ասէ առէ՛ք զՀոգի սուրբ, առ 'ի նշանակել նոցա թէ նոյն ինքն է. որ յԱՀգամ փչեաց և եղ 'ի նմա զՀոգի կենդանութեան, և որպէ՛ս նա 'ի Հողոյ գեռ և ս ստեղծեալն էր անշարժ և անգործ և անկենդան գոլով, 'ի ձեռն Աստուածային փչման,

այնքան պատուականագոյն և բարձրագոյն ամենայն արարածոց եղև, որպէս Մովսիսականն պատմեն գիրք, այսպէս և դուք 'ի ձեռն Աստուածային փչմանս նորոգեալք լինելոց էք հզօրագոյն և կարողք յամենայնի, որպէս և ստացան իսկ զհետ այնմ զայնքան համբերութիւն և զժուժկալութիւն, այլ և զնախնի անմահութիւն և զանապականութիւն։

Յայս ամենայն ողջամիտ հաւատոյ աչօք նկատեալ համարձակիմ ասել, եթէ Հեղինակն կարի սխալեալ գրելով այսպէս. Նշանակ էր փչումն այն առաքման Հոգւոյն սրբոյ, որով ընդ հանգերձեալ էին յաւուրն Պենտեկոստէից։ Երես. 314. Տան. 4։

Զոյս ծանօթութիւն տալով յայտնի առնէ Հեղինակն, թէ ինքն անհամաձայն սուրբ աւետարանին և հակառակ սրբոց Հարց և Աստուածաբան վարդապետաց խորհրդածեալ է։ Նախ՝ զի սուրբ աւետարանն յայտնէ թէ Յիսուս Քրիստոս Աստուածային փչմամբ յառաքեալսն՝ ետ նոցա իշխանութիւն կապելոյ և արձակելոյ. «Փչեաց 'ի նոսա և ասէ առէք Հոգին սուրբ, եթէ ումիք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա, եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի». Յովհ. Ի. 23։

Երկրորդ՝ զայն առաջին Աստուածային փչման սկզբնական արդարութեան և անմեղութեան զօրութիւն, զոր կորուսաք 'ի դրախտին ստունգանելով պատուիրանացն Աստուծոյ, վերստին պարգևեաց Յիսուս Աստուածային փչմամբ յառաքեալսն. որպէս գրէ Ներսէս Շնորհալի սուրբ Հայրապետն յերգս Շարականի. «Որ յերկրորդի լինելութեանս յետ յարութեան քումմ էակցին մտեալ 'ի վերնատունն դրօքն փակելովք ըստ առաջին փչման զքեզ, մետասանիցն առաքելոցն ասաց առէք Հոգի սուրբ»։

Եւ 'ի Յիսուս որդին հրաշալի Աստուածաբանութեամբ. «Յետ յարութեան յերեկոյին միաշաբաթի կիւրակէին, եկեալ Յարն մետասանին, փակեալ դրամբք 'ի գիշերին, և զփչումն առաջին, զոր կորուսաք մեք 'ի դրախտին, պարգևեցեր դար-

ձեալ նոցին, նոքօք բնութեան ըստ մարդկային։

Երրորդ՝ փչելովն կենարարին մերոյ Յիսուսի յառաքեալսն՝ տպաւորեաց 'ի Հոգիս նոցա զսրբարար շնորհս Հոգւոյն սրբոյ՝ յորդեգրութիւն Հօրն երկնաւորի, զորմէ գրէ սուրբն Գրիգոր Նարեկացի. «Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ Որդւոյ և ընդ Հօր և զՀոգի էութեան նոցին, ամենազօր, ճշմարիտ, կատարեալ և սուրբ...բարի ինքնակալ ամենից, բաշխիչ զՀօրն պարգևս, ի գովեստ անուան փառաց միածնին, որ ազդեաց յօրէնսն, շընչեաց ի մարգարէսն, փչմամբ ազգակցին տպաւորեցաւ յառաքեալսն»։ Նար։ Լ.Դ։

Զայս հոգելից բան առեալէ Նարեկացին 'ի Սրբազան առաքելոյն Պօղոսէ, որ բացայայտ գրէ։ «Զի ո՛չ առիք զՀոգի ծառայութեան միւսանգամ յերկիւղ։ այլ առիք զՀոգին որդեգրութեան, որով աղաղակեմք աբբայ Հայր։

— «Նոյն ինքն Հոգին վկայէ Հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ, և եթէ որդիք՝ ապա և ժառանգք՝ ժառանգք Աստուծոյ և ժառանգակից Քրիստոսի։» Հռոմ։ Ը։ 15—17

Զորրորդ՝ Աստուածային փչմամբն իւրով յառաքեալսն և յասելն՝ Առէք Հոգի սուրբ, խրախուսեաց և արիացոյց զնոսա, ըստ ամենայնի բառնալով 'ի սրտից նոցա զանոտի երկիւղն մարդկային, ներգործեաց 'ի նոսա զՀոգւոյն սրբոյ շնորհաց զօրութիւնս։ Առ այս զօրացուցիչ շնորհս սուրբ Հոգւոյն՝ վստահամիտ յուսացեալ երանելի Սրբազան առաքեալն Պօղոս գրէ առհաւատացեալս։ «Նոյնպէս և Հոգին 'ի թիկունս հասանէ տկարութեան մերում։ զի զոր կամքն յաղօթս, որպէս արժան իսկ ոչ գիտեմք։ Այլ ինքնին Հոգին բարեխօս լինի 'ի հեծութիւնս անմեռունչս»։ Անդ։ Ը։ 26։

Այսպէս այն Աստուածային փչումն Յիսուսի Քրիստոսի առ Սրբազան առաքեալս ունէր զանազան շնորհաց խորհուրդս՝ ուրեմն խորհրդական էր եւ ոչ նշանակ փչումն ըստ սխալական կարծեաց Հեղինակին։

Իսկ նշանակ հոգւոյն սրբոյ գալստեան առ դասս Սրբոցն առաքելոցն էր իսկ և իսկ աներկրայելի խոստմունքն Յիսուսի՝ զոր աւետարանեաց աշակերտաց իւրոց. «Եթէ սիրէք զիս՝ ըզպատուիրանս իմ պահեսջիք, և ես աղաչեցից զՀայր, և այլ մըխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան, զՀոգին ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունիլ, զի ոչ տեսանէ զնա, և ոչ ճանաչէ զնա, բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ և ընդ ձեզ եղիցի»: Եւ թէ՝ «Այլ ես զճըշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ եթէ ես երթամ, զի եթէ ես ոչ երթայց. մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ: Այլա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ». Յովհ. ԺԴ. 15. 17: ԺԶ. 7:

«Եւ ահա՛ ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ 'ի ձեզ, և դուք նստարո՛ւք 'ի քաղաքիս Յերուսաղէմ, մինչև զգենուցուք զօրութիւն 'ի բարձանց». Ղուկ. ԻԴ 49:

Վ. ԵՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական ճշմարիտ կրօնք մեր իրաւամբ պարտաւորեն զմեզ աշխարհիս զգուշութեամբ գիտողութիւնս առնել ՝ի վերայ ուղղափառ հաւատոյ, ուշի ուշով նկատել ՝ի Սուրբ աւետարանն Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ ըստ հոգեբուղխ քարոզութեան առաքելապատիւ հայրապետին մերոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. «Գիտոյ է միշտ դատխարակութիւն աւետարանին ՝ի հրահանգել զմեզ ՝ի լաւութեան կարգս, զի յանձանձեալք ՝ի շնորհաց Սուրբ Հոգւոյն ճշմարտութեամբ, ամենայնիւ զվատակս արդարութեան, սուրբ սրտիւ և ուղղափառ հաւատով յԱստուած». Յաճախ. Բ. ճառ:

Քանզի ՝ի սուրբ աւետարանի անդ բացայայտ կարեմք տեսանել զաքանչելի զօրութիւնս և զմարդասիրական փրկագործ տնօրէնութիւնս կենարարին մերոյ Յիսուսի, անդանօր կարեմք տեսանել զԱստուածային անսահման շնորհաց լիութիւնս, և զկոչումն մեր յորդեգրութիւն Հօր Աստուծոյ և ՝ի ժառանգութիւն երկնից արքայութեան երանաւէտ փառաց:

Եւ զկնի այսր ողջամիտ գիտողութեան պարտաւորիմք, նախ՝ մեծաւ ջերմեռանդութեամբ և երկիւղիւ ունկնդիր լինել և ՝ի միտ առնուլ ՝ի նմանէ զաւետարանական օրէնս և զհոգեկեցոյց պատուիրանս:

Եւ երկրորդ՝ ոչ միայն լսողք պարտիմք լինել օրինացն և պատուիրանաց, այլ և գործով կատարել փոյթ մեծ ունիլ, զի նոքաւ խոստացեալ երջանկութեան հասանիցիմք, և Քրիստոսասէր անուանիցիմք կատարելապէս. ըստ այնմ, «Եւ նա ասէ՝ նա՛ երանի այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ և առնեն». Ղուկ. ԺԱ. 28. և թէ՝ «Եթէ զայս գիտէք՝ երանելի եսջիք՝ եթէ առնիցէք զայս». Յովհ. ԺԳ. 17: «Որ ունի զպատուիրանս իմ՝ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս և որ սիրէն զիս, սիրեսցի

'Ի Հօրէ իմմէ, և ես սիրեցից զնա և երևեցուցից նմա զիս ... Եթէ ոք սիրէ զիս զբանս իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա, և առնասցուք և օթևանս առնասցուք». Անդ. ԺԴ. 21. 23։

Արդ՝ վկայէ սիրտ իմ փորձառու վերահասութեամբ, զի ուղղափառ ազգ իմ Հայկազեան ամենայն ջերմեռանդութեամբ և կատարեալ հաւատով գիտեն դիտողութիւնս առնել 'Ի վերայ Սրբոյ աւետարանին Յիսուսի փրկչին մերոյ և շնորհիւ սուրբ Հոգւոյն Աստուծոյ զշճմարտութիւն նորին գանձել փութասիրին 'Ի միտս իւրեանց, և յանժխտելի հրամանս և 'Ի պատուիրանս նորա սիրովն Յիսուսի վառեալ՝ գործով զնոյն կատարել միշտ նկրտին։ Ուստի համարձակիմ ասել թէ մերս ուղղափառ Եկեղեցւոյ հարազատ որդիք առաքինասէր գործով և բարեպաշտական արդեամբք իրաւամբ անուանին Քրիստոսասէր և երանելի ժողովուրդ Աստուծոյ։

Ուրեմն շնորհիւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի վայելչացուցանեմք 'Ի վերայ սիրելի Ազգիս հաւատարիմ և հարազատ որդւոց ուղղափառ սուրբ Եկեղեցւոյն մեր՝ զայն գոհութեան և շնորհակալութեան հոգեբուղխ բանս արբազան առաքելոյն Պօղոսի, զոր առ Եկեղեցին Եփեսացւոց գրէ. «Որով և դուք իբրև լուարուք զբանն ճշմարտութեան, զաւետարանն փրկութեան ձերոյ, որով և հաւատացեալ կնքեցայք Հոգւոյն Սրբոյ աւետեաց, որ է առհաւատչեայ ժառանգութեան մերոյ, 'Ի փրկութիւն նուաճութեան 'Ի գովեստ փառաց նորա։ Վասն այնորիկ և ես իբրև լուայ զհաւատն զձեր՝ որ 'Ի Տէր Յիսուս, և զսէրն՝ որ ընդ ամենայն սուրբս, ոչ դադարեմ 'Ի գոհանալոյ վասն ձեր, յիշել զձեզ յաղօթս, զի Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայրն փառաց՝ տացէ ձեզ ըզՀոգին իմաստութեան և յայտնութեան գիտութեամբն իւրով». Եփես. Ա. 13.

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
ԻՄԵՆՍ. Мясницкая
Ա. ՍՅԱՍՆԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

"Սիրեմ զքո զաւետարանդ, տէր. զի յորժամ քարոզեմամ, կերակրէ զիս. ցանկանամ բանի քումմ, զի 'ի ծարաւելն լմնում աղբիւր լինի ինձ, զի որչափ կամիմ, այնչափ կոչիմ 'ի կերակուրս քո, և աւելի քան զթողեալն գտայք։ Ուտեմ բազում, և միայն գտանիմ. քաղցենամ բազմօք, և զիս միայն արբուցանես 'ի շնորհէդ. զի՞նչ քեզ տայց, բայց եթէ զիս առ 'ի միաբանութիւն քեզ "։ Սուրբն Եփրեմ խուրին Ասորւոյ. 'ի ճառն մարգարտին։

ՎՐԻՊԱԿՔ ԲԱՌԻՑ

ԷՋ	ՏՈՂ	ՎՐԻՊԱԿՔ		ՈՒՂԻՂՔ
3	6	առ մեզ		առ ձեզ
»	14	(պակաս)	—	տուրք
7	2	(պակաս)	—	եւ
8	3	Աստուծոյն	—	Աստուծեն
9	1	(պակաս)	—	Փրկիչ աշխարքի. Ա. Յով. Դ. 14.
»	5	(պակաս)	—	հոգեւոր
»	26	(պակաս)	—	ամենայն
22	21	էին	—	են
23	24	եմ	—	իմ
24	24	այս	—	այ
28	31	այնքան	—	(անել բոլ է)

980
981